Azg Ազգ

25 ՕԳՈՍՏՈՍ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 148(4766)

ISSN: 1829-1651

Գլխավոր դասախազ. մայրաքաղաքում գործում է զինված բանդա

Անցյալ կիրակի ավազակային հարձակման զոհ էր դարձել նախկին պատգամավոր, «Ազգային միաբանություն» կուսակցության նախկին անդամ Նաթոլեոն Ազիզյանը: Առավոտյան դիմակավորված 5 անձ պատշգամբով մտել էին Կիլիկիա թաղամասում գտնվող Ազիզյանի բնակարան, ծեծի ենթարկել նախկին պատգամավորին, կնոջն ու դստերը եւ զենքի սպառնալիքով տնից 300.000 դոլարին համարժեք գումար եւ գույք տարել: Հունիս-հուլիս ամիսներին նմանատիպ ավազակային հարձակման զոհ էին դարձել նաեւ Մալաթիա-Սեբաստիա համայնքի նախկին թաղաքեր, Կադաստրի պետական կոմիտեի պաշտոնյա Աղվան Գրիգորյանը եւ «Լինսի» հիմնադրամի ճանապարհաշինական ծրագրերի նախկին տնօրեն Էդվարդ Բեզոյանը: Այս երկու դեպքում էլ զինված եւ դիմակավորված անձինք առավոտյան մուտք էին գործել նրանց տուն, ծեծի ենթարկել տան անդամներին եւ զենքի սպառնալիքով հափշտակել գումար: Երկու դեպքում էլ դիմակավորված անձինք գողոնը տեղափոխել էին պաշտոնյաներին պատկանող ավտոմեքենաներով:

Վերջին շրջանում մայրաքաղաքում նմանատիպ ձեռագրով ավազակային հինգ հարձակում է տեղի ունեցել: Դրանց առթիվ հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքն է երեկ քննարկվել գլխավոր դասախազությունում՝ մասակցությամբ ՀՀ գլխավոր դասախազ **Աղվան Հովսեփյանի**, գլխավոր դասախազի տեղակալ **Մնացական Սարգսյանի**, Երեւանի դասախազ **Հրաչյա Բաղալյանի**, Ավան եւ Նոր Նորք, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների դասախազների, ՀՀ ոստիկանպետի առաջին տեղակալ **Հունան Պողոսյանի**, Երեւան քաղաքի ոստիկանապետ **Ներսես Նազարյանի**, ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի եւ նախաքննությունն իրականացնող քննիչների:

Գլխավոր դասախազի տեղակալի ներկայացմամբ՝ ավազակային հարձակումները հիմնականում արձանագրվել են վերոնշյալ վարչական շրջաններում: Թեպետ կատարված հանցագործությունների ձեռագրերի նմանությունն ակնհայտ է, սակայն Սարգսյանը տեղեկացրել է, որ գործերը քննվում են տարբեր քննիչների վարույթում: Հարձակումները կատարվել են վաղ առավոտյան՝ ժամը 04:30-06-:00-ի սահմաններում: Հանցագործները եղել են 4-5 հոգի, սեւ հագուստներով, դիմակներով եւ ձեռնոցներով, զինված հրազենով: Նրանք բռնության գործադրմամբ հափշտակել են խոշոր չափերի գումար:

Դատախազը հանձնարարել է մայրաքաղաքում արձանագրված ավազակային հարձակումների դեպքերով հարուցված քրեական գործերը միավորել մեկ վարույթում եւ նախաքննությունն իրականացնել համատեղ:

«Քրեական գործերի վերլուծությունը վկայում է, որ մայրաքաղաքում գործում է կայուն, զինված բանդա, որի բացահայտումը պետք է լինի քննության առաջնային նպատակը: Եթե մայրաքաղաքում արձանագրված առաջին 1-2 դեպքերով ձեռնարկվեին անհրաժեշտ օպերատիվ-որոնողական աշխատանքներ եւ բացահայտվեին կատարողները, ապա այսօր դրանց շարունակությունը չէինք ունենա: Հանցավորության դեմ պայքարի արդյունավետության թիվ 1 նախապայմանը հանցագործության բացահայտումն է», ասել է Հովսեփյանը: Գլխավոր դատախազը ցուցում է տվել հարուցված գործերը վերադարձնել բանդիտիզմ: Դատախազը ոստիկանության ուշադրությունն է հրավիրել փաստին, որ ընթացիկ տարում հանրապետությունում նկատվել է ավազակային հարձակումների աճ: Հովսեփյանը հանձնարարել է ձեռնարկել դրանք բացահայտելու կտրուկ միջոցառումներ:

ՀԱՄՏԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դանակահարում Ռոստովում

Ադրբեջանի քարոզչությունը մարդասպաններ է դատիարակում

Երբ հայաստանյան մամուլը տեղեկացրեց, թե ձերբակալվել է տարիներ առաջ ադրբեջանցու ձեռքով Բուդապեշտում սպանված հայազգի սպա Գուրգեն Մարգարյանի եղբայրը, ադրբեջանական մամուլում այդ տեղեկությունն օգտագործվեց եւս մեկ անգամ հիշեցնելու մարդասպանի մասին՝ որպես «հերոսի»: Այդպիսի մոտեցումը ներկայացնում է գրեթե ողջ ադրբեջանական հասարակության «դաստիարակությունը», որ արդյունք է այդպես էլ չդադարեցվող պատերազմական քարոզչության:

Ու չնայած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներն իրենց հերթին, միջազգային հանրության տարբեր ներկայացուցիչներ եւս բազմիցս կոչ են արել նախապատրաստվել ոչ թե պատերազմի, այլ խաղաղության, դրան նախապատրաստելով նաեւ երկու երկրների հասարակություններին, ակնհայտ է, որ ադրբեջանական քարոզչությունն իր ուղղվածությունը չի փոխում, ավելին, տալիս է տխուր արդյունքներ:

Ռուսաստանի ներքին գործերի նախարարության Ռոստովի քաղաքային գլխավոր վարչության պաշտոնական կայքէջը տեղեկացնում է, որ օգոստոսի 23-ին ոստիկանության թիվ 5 բաժանմունքի հաղորդում է ստացվել, թե քաղաքի Լենինի հրապարակում զանգվածային ծեծկռտուք է: Մի քանի րոպե անց, ըստ հաղորդագրության, ոստիկանները եղել են նշված վայրում, որտեղ տեսել են դանակի հարվածներից վիրավորված 4 անձի, որոնց ֆիզ անց մոտեցել է շտապ օգնության մեքենան:

«Ծեծկռտուքի ականատեսներից ոստիկանները ճշտել են պատահածի հանգամանքները. ծեծկռտուք են սարքել երկու ադրբեջանցի՝ 22 եւ 25 տարեկան», տեղեկացնում է ոստիկանության հաղորդագրությունը, ավելացնելով, որ ադրբեջանցիները նախ բարձրաձայն վիճել են մի քանի երիտասարդների հետ, ապա ձեռնամարտի անցել, վերջում էլ հարձակվել դանակներով: «Նրանք սառնաարյունորեն դանակներով հարվածներ են հասցրել իրենց զոհերին, ապա դիմել փախուստի...», տեղեկացնում է հաղորդագրությունը, ներկայացնելով, որ որոշ ժամանակ անց հանցագործները հայտնաբերվել ու կալանվել են իրենց վարձու բնակարանում:

Ադրբեջանական կայքէջերն ուղղակի հորթի հրճվանքով են ներկայացնում, որ դանակահարվածները եղել են հայեր: Այն, որ տեղի ունեցածը ներկայացվում է որպես էթնիկ հողի վրա բախում, զարմանալու տեղիք չի տալիս, սակայն երբ ադրբեջանական կայքէջերը կատարվածը մեկնաբանում են որպես ազգային պատկանելության հողի վրա վեճ, ընդ որում, դա վերագրելով ռուսաստանյան լրատվամիջոցներին, որոնցից շատերում նման արտահայտություն իսկ չգտնվի, հարց է առաջանում, թե ի վերջո ի՞նչ են կրթում ու դաստիարակում Ադրբեջանում:

Կայքէջերն իրենց անհանդուրժողական հայտարարությունների հետ տեղեկացնում են, որ կալանվածները ռուսաստանյան իրավապահներից պահանջել են հանդիպում Ադրբեջանի հյուպատոսի եւ Ռոստովի մարզի ադրբեջանական համայնքի ղեկավարի հետ: Նույն իրավապահներն էլ լրացրել են նախապես տարածված տեղեկությունները նրանով, որ հայերի վրա հարձակված ադրբեջանցի երիտասարդները հարբած են եղել, իսկ թե ի՞նչ պատճառով է վեճ ծագել՝ դեռ պարզված չէ: Ամեն դեպքում, տուժածներից մեկը ծանր վիճակում է, մյուսները ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Սոցիալական ցանցերում էլ այս իրադարձությունը դարձել է քննարկման առարկա, ընդ որում, Ռուսաստանի բնակիչների դժգոհությունն այսպիսի գազանություններից ստացել է հետեւյալ կոչի տեսք. «Իշխանություն, բավ է հանդուրժողականություն խաղաս, պատշաճիր քո ժողովրդին բռնությունից ու ամենաթողությունից»: Հետաքրքրական է, սոցիալական ցանցերի քննարկումներում տուժած հայերը ներկայացվում են որպես ռուսովցիներ, իսկ կալանված ադրբեջանցիները միայն նշել են Ադրբեջանի քաղաքացի լինելու մասին:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՈՒՅԺ

Արմեն Հովհաննիսյան

Երկարատեւ հիվանդությունից հետո երեկ իր մահկանացուն կնքեց ժամանակակից հայ հրապարակախոսության, ռադիոհեռուստատեսության, թարգմանական արվեստի կարեւոր ու սիրված դեմքերից Արմեն Հովհաննիսյանը: Ծնվել էր 1936 թ. Թավրիզում: 1946-ին ներգաղթել էր Մայր հայրենիք: 1958-ին ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինն ավարտելուց հետո, բուռն նվիրումով ընդգրկվել էր տպագիր մամուլի, ապա ռադիոյի եւ ավելի ուշ՝ հեռուստատեսության տարբեր ոլորտներում, ամեն տեղ դրոշմելով իր անհատականությունը, ստեղծագործական ջիղը եւ ներդնելով իր հմտությունները: Սակայն հատկապես ռադիոհեռուստատեսության երաժշտական հաղորդումների ասպարեզում ծավալած խխունջ ու նորարարական գործունեությունն էր, որ նրան բերեց առավել լայն ճանաչում եւ ժողովրդականություն, որն առավել շեշտվեց հետագայում Սոլժենիցինի, Բուլգակովի եւ ռուս հռչակավոր այլախոհ մյուս գրողների գործերի հրաշալի նրա թարգմանությամբ:

Վերջին երկու տասնամյակներին դասախոսում էր Երեւանի պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետում եւ մեծ նվիրումով պատրաստում ապագա ռադիոհեռուստալրագրողներ: Նույնիսկ հիվանդության վերջին տարիներին ուսանողներին ընդունում եւ դիպլոմնիկների հետ պարապում էր տանը՝ հիվանդության սնարի մոտ, որի համար ուսանողները պաշտելու աստիճան սիրում էին նրան:

Արժանացել է բազմաթիվ պարգեւների եւ մեդալների, այդ թվում՝ Հայաստանի ժուռնալիստների միության «Ազդարար», ՀՀ նախագահի, Ամենայն հայոց հայրապետի եւ Ռուսաստանի Դաշնության նախագահի պարգեւներին:

1991-ից սկսած մինչեւ իր մահը, բազմաթիվ հոդվածներով ու թղթակցություններով աշխատակցել է նաեւ «Ազգ»-ին:

Ուղիղ եւ ուղղախոս, շիտակ եւ լայնընդգրկուն մտահորիզոնի տեր անձնավորություն էր Արմեն Հովհաննիսյանը, իսկական մտավորական, որի կորուստը զգալու ենք միշտ:

***

Հոգեհանգիստը՝ այսօր ժ.18:00-ից, Նորքի 5-րդ զանգվածի Սբ Սարգիս եկեղեցում: Հուղարկավորությունը՝ վաղը՝ Գրողների տնից:

«Թե կուզես հաշտ պրինք, բարի հարեւան, պատվիս, կրոնիս, հացիս մի դիպչի...»

Ձիվանու այս խոսքերը վրացական ծայրահեղականներին երեկ հրապարակած հաղորդագրությամբ հիշեցրել է Վիրահայերի միասնություն հասարակական կազմակերպությունը: Արտահայտելով իր մտահոգությունը՝ կապված վերջին օրերին Վրաստանում գլուխ բարձրացած հակահայկական հիստերիայի հետ, կազմակերպությունը նշում է. «Ծայրահեղական մութ ուժեր, այդ թվում՝ հոգեւոր եւ աշխարհիկ, հրահրում են հայ եւ վրաց ժողովուրդների շահերին անհարիր թշնամանք: Գործը հասել է այնպիսի լկտիության, որ անսթափ վիճակում գտնվող երկու երիտասարդ մուտք են գործել Աստծո տաճար, վիրավորել մեր ազգային արժանիքներն ու հավատը, եղծել խորանին դրված «Ճաշոց գիրքը»: Սա այնպիսի մի արարք է, որ դատապարտելի է բոլոր օրենքներով եւ կարող է տեղիք տալ ազգամիջյան լարվածության: Մենք սատարում ենք Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմին եւ կոչ ենք անում վրաց իշխանություններին՝ խիստ միջոցներ կիրառելով սանձել հակահայկական քարոզով զբաղվող պաշտոնյաներին ու արժանի պատժի ենթարկել՝ հետայսու նման արարքները կանխելու համար»:

Հ. Ա.

Այդան Թաղիզադեի «երազանքը»

Ստեփանակերտցի դպրոցական Ադելինա Ավագիմյանի՝ Իլհամ Ալիեւին հասցեագրած նամակ, ըստ երեւույթին, ադրբեջանական հասարակության մեջ բանավեճի տեղիք է տվել: «Ենի Մուսավաթ»-ի թղթակիցը հանդիպել է «Մալիբեկլուից փախստական» Այդնան Թաղիզադեին: Վերջինիս արձագանքի ամենաբնորոշ հատվածն այս է. «Ղարաբաղը մեր հոգին է, մենք ադ հողերի կորստյանը չենք համակերպվելու: Մեր արյան գնով էլ լինի, Ղարաբաղը վերցնելու ենք, ժամանակը որ գա՝ Մուբարիզ Իբրահիմովի նման մեր հերոսները ոտքի են կանգնելու: Այսօր մենք հանգիստ կանգնած, կողքից դիտող ենք, վաղը ոտքի ենք կանգնելու: Մեր նախագահ Իլհամ Ալիեւը եթե բանակի գլուխն անցնի, դեպի առաջ մի քայլ անի, մեր քաջ տղաները նրա թիկունքին են լինելու»:

Որքան էլ խմբագրված, Այդան Թաղիզադեի «երազանքը» հավանաբար առնվազն նրա հասակակիցների շրջանում տիրող ընդհանուր տրամադրվածության արտահայտություն կարելի է համարել՝ որ Իլհամ Ալիեւը «գնա առջեւից, իսկ քաջ տղաները նրա թիկունքում լինեն»: Փաստորեն ադրբեջանական երիտասարդությունը պահանջում է, որ Իլհամ Ալիեւը, եթե պատերազմել է ուզում, լինի «առաջավոր գծում, անձամբ իր օրինակով ոգեւորի»:

Իր «երազանքում», սակայն, նա խաբված է. Իլհամ Ալիեւը ղարաբաղյան պատերազմի տարիներին նույնիսկ Ադրբեջանում չի գտնվել: Ընտանիքով ապրել է Սամբուլում, եղել գիշերային ակումբների եւ խաղատների մշտական այցելու: Եվ անիմաստ է սպասել, որ նա «առաջնորդելու է քաջ տղաներին»: Ընդհակառակը, նա ամեն ինչ անում է, որ իր ընտանիքը բանակին ոչ մի առնչություն չունենա: Մոտ ժամանակներս խորհրդարանը փոփոխություն կկատարի «Զինապարտության մասին» Ադրբեջանի օրենքում, եւ «ծնողների միակ արու զավակները կազատվեն պարտադիր զինվորական ծառայությունից»: «Պատերազմի նախապատրաստվող երկիրն ինչո՞ւ է իրեն նման շռայլություն թույլ տալիս»,- լսելով այս մասին, հավանաբար կզարմանա «Մելիբեկլուից փախստական» Այդան Թաղիզադեն: Ադրբեջանում, իհարկե, ոչ ոք չի համարձակվի ասել իշխանությունների շահագրգռվածության իրական պատճառը: Մնում է, որ մենք օգնենք.

- Սիրելի Այդան, դու կարող ես բացել քո երկրի նախագահի պաշտոնական կայքէջը՝ www.president.az եւ «Նախագահի ընտանիքը» բաժնում կարդալ, որ Իլհամ Ալիեւն ունի երեք զավակ՝ երկու դուստր եւ որդի, որին տրվել է պապի անունը: Նա ծնվել է 1992թ. եւ, ըստ օրենքի, պետք է արդեն զորակոչված լիներ զինվորական ծառայության: Ահա դրա համար էլ հարկ է օրենքում փոփոխություն կատարել, որպեսզի կրտսեր Հեյդար Ալիեւի բանակ չզորակոչվելն արդարացվի նրա՝ ծնողների միակ արու զավակը լինելու հանգամանքով: Կարծում ենք, որ քեզ համար արդեն պարզ պիտի լինի, որ քո երկրի նախագահը չի ուզում հանուն «Ղարաբաղը վերցնելու» հեղել իր որդու արյունը: Քեզ խորհուրդ ենք տալիս հետեւել նրա օրինակին. եթե Մուբարիզ Իբրահիմովի քայլն իրոք հերոսական եւ ընդօրինակելի լիներ, ապա Իլհամ Ալիեւն իր որդուն բանակում ծառայությունից չէր ազատի, այլ կուղարկեր շփման գծի որեւէ զորամաս:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ
Ստեփանակերտ

Անշարժ գույքի կադաստրի համակարգում կստեղծվեն սպասարկման գրասենյակներ

Դիմումներն ու տեղեկատվության տրամադրումը հնարավոր կլինեն նաեւ էլեկտրոնային տարբերակով

Մի քանի տարի առաջ Հայաստանում, պետական ծառայություններից առաջինը անշարժ գույքի կադաստրի համակարգում իրականացվեցին բարեփոխումներ՝ ներդրվեց «մեկ պատուհանի» համակարգը, նվազեց պաշտոնյա-բնակիչ շփումը, պարզեցվեցին կատարվող գործընթացները, նվազեցին դրանց դիմաց վճարումները եւ կրճատվեցին դրանց իրականացման ժամկետները: Սակայն համակարգի կատարելագործումը պահանջում է շարունակել բարեփոխումները, համընթաց գնալ ժամանակի պահանջներին, ինչի անհրաժեշտության մասին համապատասխան քաղաքականություն է մշակվել կառավարության կողմից:

Թե ինչպե՞ս են շարունակվելու բարեփոխումներն այստեղ, ի՞նչ կտան դրանք համակարգի հետ շփվող քաղաքացիներին եւ կազմակերպություններին, հարցրեցինք անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կառավարման ավտոմատացման համակարգերի վարչության պետ Արման Պետրոսյանին:

Ըստ **Արման Պետրոսյանի**, նախ եւ առաջ, անշարժ գույքի կադաստրի համակարգում, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առումով, Հայաստանը զիջում է այն երկրներին, որոնց փորձը ուսումնասիրել են մեր մասնագետները: Այդ երկրներն են Նիդեռլանդները, Լիտվան, Վրաստանը: Դա հնարավորություն է տալիս այդ երկրների բնակիչներին մատուցել առցանց որակյալ ծառայություններ, վերացնելով նրանց՝ կադաստրի կոմիտե այցելելու անհրաժեշտությունը: Իսկ ընդհանրապես Հայաստանի անշարժ գույքի կադաստրի համակարգում բարեփոխումների հայեցակարգով նախատեսված են բարեփոխումների երեք ուղղություններ:

Առաջինը ինստիտուցիոնալ բարեփոխումներ են, որոնք, մասնավորապես, ենթադրում են սպասարկման գրասենյակների ստեղծում: Քաղաքացիներն իրենց դիմումները կներկայացնեն այդ գրասենյակներ, որոնք կլինեն չեզոք մարմիններ գործառույթներ իրականացնողի, այսինքն կադաստրի համակարգի եւ քաղաքացիների միջեւ: Փաստորեն, մեր զրուցակցի հավաստմամբ, վերացվում է քաղաքացի-պետական պաշտոնյա շփումը: Բացի դրանից՝ վերացվում է դիմումների ներկայացման կամ պատասխաններ ստանալու ստարածքային սահմանափակումը: Քաղաքացին դիմումը կարող է ներկայացնել կադաստրի մի ստորաբաժանումից եւ, սեփական ցանկությամբ, պատասխան ստանալ մեկ այլ ստորաբաժանումից:

Հաջորդը գրանցման գործընթացի պարզեցումն է: Եթե նախկինում յուրաքանչյուր գործարքից հետո գույքի գրանցման համար նոր տեղազննություն էր կատարվում, ապա այժմ, եթե գույքը գրանցված է 1998-ից հետո եւ փոփոխություն չի կատարվել, նոր տեղազննություն չի կատարվելու: Մեկ այլ փոփոխությամբ էլ, զավթված հողամասի առկայության դեպքում օրինական գույքի գրանցումը չի մերժվելու:

Բարեփոխումների երկրորդ ուղղությունը, ինչպես արդեն նշվեց, վերաբերում է համակարգի ավտոմատացմանը: Ինչպես հայտնեց Արման Պետրոսյանը, այն ենթադրում է ներդնել անշարժ գույքի կադաստրի եւ գույքային իրավունքների ռեգիստրի վարման ամբողջովին ավտոմատացված համակարգ: Այսինքն, փաստաթղթաշրջանառությունը կվարվի էլեկտրոնային եղանակով, կստեղծվի էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, արխիվ: Դրա շնորհիվ, արդեն 2012-ից, քաղաքացիները հնարավորություն են ունենալու կադաստրի կոմիտեի կայքի միջոցով ներկայացնել իրենց դիմումները համապատասխան ստորաբաժանումներ, հետեւել իրենց դիմումի ընթացքին, ստանալ իրենց հետաքրքրող հարցի պատասխանը: Երբ վերջնականապես ձեւավորվի կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազան, արդեն հնարավոր կլինի այդ ծառայությունները առցանց մատուցել: Օրինակ՝ պահանջվող տեղեկատվությունը հնարավոր կլինի ստանալ հաշվված վայրկյանների ընթացքում, իսկ պետական մարմիններում կամ այլ կառույցներում (սոցիալական ծառայություններ, բանկեր, նոտարներ) քաղաքացիներից անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով տեղեկանքներ չեն պահանջվի, քանի որ նրանք կարող են այդ տեղեկատվությունը ստանալ առցանց:

Բարեփոխումների երրորդ ուղղությունն էլ իրավական օրենսդրական փոփոխություններն են, որոնք պետք է աջակցեն բարեփոխումների առաջին եւ երկրորդ ուղղությունները: Դրանք, կոմիտեի կառավարման ավտոմատացման համակարգերի վարչության պետի տեղեկացմամբ, հիմնականում կատարված են:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ի՞նչ «դժբախտություն» է եկել «մեր» տուն

«Քույրեր եւ եղբայրներ, դժբախտություն է եկել մեր տուն», այս վերամբարձ խոսքերով սկսվում է էլ ավելի վերամբարձ անվանում ունեցող «Աստծո ձայն» ավետարանական եկեղեցու հոգեւոր հովիվ **Սեդրակ Մինասյանի** կոչը Հայաստանի կրոնական կազմակերպությունների ղեկավարներին՝ առանց հստակեցնելու, թե «մեր տունը» ո՞րն է: Ինչեւէ՝ սկսենք «Հրաղարակ»-ից: Երեկ հայկական այս օրաթերթում տպագրվեց հոդված, որը «բացահայտում էր», թե «Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն ֆինանսավորում է «Ջենք լռելու» երիտասարդական նախաձեռնությանը՝ աղանդների դեմ պայքարելու համար», ավելին՝ թերթն արձանագրել էր, որ՝ «առաքելական եկեղեցու հաստատությունն էլ պարզապես համագործակցության մասին կասկածներըցրելու միջոց է»: Ու հենց այստեղ, գուժելով «մեր տուն» վրա հասած դժբախտությունը, քույրերին ու եղբայրներին դիմեց վերոհիշյալ Սեդրակ Մինասյանը՝ «Աստծո ձայն»-ից, իսկ միգուցե եւ՝ «Աստծո ձայնի՞»..... ««Հրաղարակ» թերթը բացահայտեց էջմիածնի պլանները՝ ստեղծելով եւ ֆինանսական մեծ միջոցներ տրամադրելով «Ջենք լռելու» երիտասարդական կազմակերպությանը, որը նպատակ ունի՝ ամբողջովին կոտրել մարդկանց հավատքը այլ եկեղեցիների հանդեպ: Մեզ բոլորիս ձեռնոց է նետված, հակառակորդն ուժեղ է ու հզոր եւ ջանք չի խնայելու այլադավանություններին հասարակության աչքում թշնամի դարձնելու համար», Մինասյանի այս խոսքերը կարծես միջնադարում վճռական պատերազմի նետվող զորախմբի հրամանատարի խոսքեր լինեն, իսկ շարունակելով՝ «հոգեւոր հովիվը» կոչով է դիմում հայաստանյան բոլոր կրոնական կազմակերպությունների ղեկավարներին՝ միավորվելու «այս օրհասական պահին»:

Միեւնույն ժամանակ, երեկ «Ջենք լռելու» նախաձեռնությունը հանդես եկավ հայտարարությամբ, որով մասնավորապես նշեց. «Ոչ մի էժանագին սենսացիա չի կարող սիրել երիտասարդական նախաձեռնությանը որեւէ կերպ փոխել իր սկզբունքներն ու աշխատանքը: Նախաձեռնությունը ինչպես ֆինանսավորել, այնպես էլ ֆինանսավորել է Հայ առաքելական եկեղեցու վերնախավում գտնվող մի շարք հոգեւորականների բացարձակ անհանդուրժողությունը ներհասարակական կյանքին, նրանց կողմից հայրենավոր հնադարյան սրբավայրերի փրկման խնդրի անտեսումը, աղանդների կարգավիճակը բարելավող օրինագծի ընդունմանն ընդառաջ՝ հանցավոր լռությունը: Որպես երեւույթ՝ ինչպես քարկոծվել, այնպես էլ քարկոծվելու են հայի ինքնությունը քայքայող օտարածին աղանդները: Այս առիթով նշենք, որ «Ջենք լռելու»-ն

մոտակա օրերին սկսելու է աղանդների մերկացման լայնածավալ ծրագիր՝ 5 բացառիկ տեսանյութերի հրապարակմամբ»: Հայտարարությամբ «Ջենք լռելու»-ն հերքում է նաեւ, որ իրենք ֆինանսավորվում են որեւէ մի կազմակերպությունից, առավել եւս Հայ առաքելական եկեղեցուց. «Մինչեւ օրս մենք որեւէ ֆինանսական աջակցություն չենք ստացել», արձանագրում է նախաձեռնությունը: Հայտարարության վերջում «Ջենք լռելու» խումբը «հատուկ շնորհակալություն» է հայտնում «Հրաղարակ» օրաթերթին՝ «նախաձեռնության համեստ արժանիքները այդքան բարձր գնահատելու համար»:

Իր հերթին՝ «Խոսքի իրավունք» միավորումը նույնպես տարածել է հաղորդագրություն՝ «Հրաղարակ»-ի հոդվածի կապակցությամբ. «Մեր միավորումը հակված է ենթադրելու, որ «Հրաղարակ»-ի նյութն իրականում աղանդավորների պաշտպան է՝ հաշվի առնելով այդ թերթի խմբագրության սեր կապերը աղանդավորական կազմակերպություններից մեկի ղեկավարի հետ: Թերթի նման գործելաոճը մեծ սպեր է նետում Հայաստանում մամուլի հանդեպ հարգանքի եւ վստահության ձեւավորման վրա», արձանագրում է «Խոսքի իրավունքը»:

Մեր կողմից միայն մի քանի «տարօրինակ թվացող» հարցեր «հոգեւոր հովիվ» Սեդրակ Մինասյանին. նախ՝ «այդ ո՞ւմ տունն է դժբախտություն եկել», մե՞ր, իսկ ովքե՞ր ենք այդ «մենքը», ավելի ճիշտ՝ ինչո՞ւ Մինասյանի «մենքը» նաեւ մենք չենք: Երկրորդ՝ ո՞ւմ մասին է խոսում Մինասյանը՝ ասելով «հակառակորդն ուժեղ է ու հզոր», մե՞ր, Հայ առաքելական եկեղեցո՞ւ... Հուսանք՝ Աստծո ձայնը կհուշի Մինասյանին՝ պատասխանելու այս հարցերին, առանց չակերտների՝ Աստծո ձայնը:

Հ. ԱՓՅԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿ

Հայաստանը դու ես

Սա Անկախության 20-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների կարգախոսն է: Հենց այս կարգախոսի ներքո մինչեւ սեպտեմբերի 21-ը կկազմակերպվեն ցուցահանդեսներ, համերգներ ու համաժողովներ: Անկախության տոնը կնշանավորվի Հանրապետության հրապարակում զորահանդեսով, այնուհետեւ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կմատուցվի պատարագ՝ «Հանրապետական մաղթանք»: Երեկոյան Երեւանի Անկախության հրապարակում պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի, պետական ակադեմիական երգչախմբի, ՀՀ նախագահի պատվո պահակախմբի փողային նվագախմբի, «Փոքրիկ երգիչներ»-ի մասնակցությամբ տեղի կունենա համերգ, որը կուղեկցվի ձայնալուսային ներկայացմամբ եւ հրավառությամբ:

Տոնական համերգներ կկազմակերպվեն հանրապետության բոլոր մարզերում, իսկ մայրաքաղաքի բոլոր համայնքներում կկազմակերպվեն տոնական միջոցառումներ, տոնավաճառներ: Անկախության 20-ամյակի կապակցությամբ կհնչեն երեք նոր ստեղծագործություններ՝ «Հայաստանը դու ես», «Իմ անունը Հայաստան է» եւ «Արմենիա»:

Այսօր ժամը 12-ին «Գաֆեսճյան» կենտրոնում միջոցառումների համակարգող Վիգեն Սարգսյանը առավել մանրամասն կներկայացնի Անկախության 20-ամյակին նվիրված տոնակատարությունների ցանկը:

Հ. Հ.

Այսօրվանից եղանակը կնվազի 4-6^0-ով

Արտակարգ իրավիճակների նախարարության «Հայդրոմետ»-ի օդերեւութաբանության կենտրոնի պետ **Զարուհի Պետրոսյանից** տեղեկացանք, որ առաջիկա 5 օրերին հանրապետության տարածքում սպասվում են ջերմաստիճանի 4-6^0-ի նվազում եւ տեղումներ: Հանրապետության շրջանների մեծ մասում օգոստոսի 25-ին, 26-ին եւ 27-ին սպասվում են անձրեւ եւ ամպրոպ, քամի՝ մինչեւ 23 մ/վ ուժգնությամբ: Օդի ջերմաստիճանը ընդհանուր առմամբ այս երեք օրերին կնվազի, ամսի 27-ին եւ 28-ին Արարատյան դաշտավայրում առավելագույն ջերմաստիճանը սպասվում է 26-27^0: Երեւանում 25-ի գիշերը կլինի առանց տեղումների, կդիտվի ամպամածություն, անձրեւի հավանականությունը փոքր է: Ամսի 26-ին, 27-ին՝ երեկոյան ժամերին եւ գիշերվա առաջին կեսին սպասվում են կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ: Օգոստոսի 25-ին Երեւանում սպասվում է 28-30^0, իսկ հաջորդ 3 օրերին ջերմաստիճանը կնվազի 4-6^0-ով:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«Վիճակագրություն» ըստ Բայրամ Սաֆարովի

1news.az-ի տարածաշրջանային թղթակիցը տեղեկացրել է, որ օգոստոսի 23-ին «ԼՂ ադրբեջանական համայնքի ղեկավար» Բայրամ Սաֆարովը «այցելել է Բելյագանի շրջան եւ հանդիպել «ադրբեջանական օկուպացված շրջանների» գործադիր իշխանության աշխատակազմերի ներկայացուցիչների հետ»: Միջոցառումն, ըստ այդմ, նվիրված է եղել «Ֆիզուլիի եւ Ջանգելանի շրջանների օկուպացման տարելիցին»: Բայրամովն, իհարկե, կարող է ազատորեն շրջել Ադրբեջանում: Բայց զարմանալի է, որ սույն անձը Բելյագանում երկու շաբաթ առաջ հայտարարություն է արել:

Նա ասել է, որ անցած 20 տարում «ԼՂ ադրբեջանական բնակչությունը 50 հազարից հասել է 75-ի»: Սաֆարովի հիշողությունը թարմացնելու համար հարկ է ասել, որ 20 տարի առաջ նախկին ԼՂԻՄ-ում, ըստ խորհրդային պաշտոնական վիճակագրության, որի իսկությանը կասկածելու առիթ չկա, քանի որ մարդահամարն անցկացվել է արտակարգ դրության պայմաններում եւ վերահսկվել զինվորականների կողմից, բնակվել է 40, 6 հազ. ադրբեջանցի՝ ներառյալ «մեսխեթցի թուրք փախստականներին» եւ «Հայաստանից բռնատեղահանված ադրբեջանցիներին», որոնց անվան տակ Ադրբեջանի իշխանությունները Շուշիում, Խոջալուում եւ այլ ադրբեջանաբնակ համայքներում «ժողովրդագրական կտրուկ աճ էին ապահովել»:

Այնուհետեւ, վերջերս Ադրբեջանի պետական վիճակագրական ծառայությունը հրապարակել է տվյալներ, որոնց համաձայն վերջին երկու տասնամյակում Ադրբեջանի «բնակչությունն աճել է 20,4 տոկոսով»: ԼՂ «ադրբեջանական համայնքն», ինչպես նույն Սաֆարովն է ասում, «ցրված է ադրբեջանական 58 շրջաններում»: Բնական է, որ այդ մարդիկ ադրբեջանական ժողովրդի եւ հասարակության անբաժանելի մասն են արդեն, ապրում են նույն օրենքներով, նույն պայմաններում, նույն կենսակերպով: Ուստի պարզ կեղծարարություն է ասելը, որ Ադրբեջանի ամբողջ բնակչությունն աճել է ընդամենը 20, 4, իսկ նրա մաս կազմող «ԼՂ ադրբեջանական համայնքը»՝ շուրջ 100 տոկոսով:

Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ Բայրամ Սաֆարովի հիվանդ երեւակայության պտուղ եւ վկայում է, որ այդ մարդը նույնիսկ իր հարազատ հանրապետության կյանքից է անտեղյակ: Երկրորդ սենսացիան, որ Սաֆարովն է արել, ոչ մի տրամաբանության մեջ պարզապես չի տեղավորվում: Ավելին, հակասում է Ադրբեջանի պետական քաղաքականությանը: Ինչպես Սաֆարովն է ասել, ««ԼՂ ադրբեջանական համայնքը» որոշել է իր ներկայացուցչությունները ունենալ արտասահմանյան երկրների մայրաքաղաքներում, դա ծանր, քննաքննելի աշխատանք է, բայց մենք ասենք՝ ամենաբարդ ամեն ինչ կանենք՝ մեր ներկայացուցչությունները բացելու արտերկրում»:

Եթե սա պարզապես հիմարություն չէ, եւ Սաֆարովը բացահայտել է Ադրբեջանի արտաքին քաղաքականության «նոու-հաու»-ն, ապա մնում է ենթադրել, որ Իլհամ Ալիեւը վերջնականապես հաշտվել է արտերկրում ԼՂՀ դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեության օրինականության հետ եւ մտադիր է դրան զուգահեռ ստեղծել «ԼՂ ադրբեջանական համայնքի ներկայացուցչություններ»: Բայց ո՞րն է այստեղ տրամաբանությունը. ԼՂՀ-ն արտերկրում դիվանագիտական ներկայացուցչություններ է հաստատել, հաստատում եւ հաստատելու է, որովհետեւ հռչակված է որպես անկախ պետություն եւ ձգտում է միջազգային ճանաչման:

Իսկ ինչի՞ են ձգտելու «ԼՂ-ի ադրբեջանական համայնքի «ներկայացուցչություններն» արտասահմանյան երկրների մայրաքաղաքներում»: Երեւի զբաղվելու են Բայրամ Սաֆարովի «վիճակագրական տվյալների» քարոզչությամբ: Կամ, ով գիտի, գուցե Սաֆարովին մեկ «Շուշա» ռեստորանը Բաքվում չի հերիքում, եւ նա մտադիր է նույնանուն թեյատուն բացել Ստամբուլո՞ւմ: Բայց այդ դեպքում ի՞նչ կարիք կա հիմար «վիճակագրություն» անել եւ չարաշահել «համայքի» անունը: Դատելով տեսքից՝ Սաֆարովն ուր էլ գնա, թեյատուն կունենա:

Վ. Ա.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գովազդով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Մեծ-Սպիտակ

Ախուրյանի բնակչության մասին ամենասուրբ պատկերացումը կարելի է ստանալ հարսանիքներից, որտեղ հարսանավորի 10 տոկոսն է տղամարդ: Ախուրյանցի տղամարդկանց մեծ մասը դրսում է, ռուսաստաններում. ձմռանը մի երկու ամսով գալիս են, դեռ գարուն չմտած՝ չվում-գնում են: Կան ընտանիքներով մեկնածներ, բայց առավելաբար՝ տղամարդիկ են գնում աշխատելու: Ախուրյանի բնակչության վերաբերյալ պաշտոնապես արտասանված թիվը՝ 10 հազար, երբ ախուրյանցիների մոտ ասում էինք, դառը ծիծաղ էր հարուցում: Այդ թիվը մեր հարցին ի պատասխան ասել էր Ախուրյանի համայնքապետ Արծրունի Իգիթյանը: Ըստ Իգիթյանի՝ Ախուրյանում ամենաէականը բնակարանային պրոբլեմն է: Նա 1996 թվականից համայնքապետ է եւ ասում էր, թե այն ժամանակի համեմատ՝ պրոբլեմները փոխվել են: Համեմատելու չէ 1996 թվականի հետ. «96 թվականին չենք ունեցել քարաշեն դպրոց, տնակային դպրոցներ են եղել երկրաշարժից հետո, էսօր ունենք բավական հարմարավետ քարաշեն դպրոցներ՝ լոկալ ջեռուցումներով: 1999-2001 թթ. սարքվել է առաջին դպրոցը, 2003 թվականին՝ երկրորդ դպրոցը սոցներդրումների հիմնադրամի միջոցներով, վերջերս շահագործման հանձնվեց ավագ դպրոցի նոր մասնաշենքը: Մոտավորապես հազարից ավելի աշակերտ ունենք»:

Այս գյուղում, փաստորեն, մյուս գյուղերի համեմատ՝ զբաղմունքը շատ է: Վերջերս կառուցվել է նաեւ շաքարի գործարանը, որ դրամի շրջանակում կարողանում ենք որոշակի ծրագրեր իրականացնել՝ ներդրումային եւ փոքր: Յուրաքանչյուր ներդրումային ծրագիր, որ հետաքրքրում է համայնքին, խրախուսում ենք, այդ ծրագրերում 10-30 տոկոս ներդրում կարող ենք կատարել: Ոռոգման ջրագծեր ենք անցկացրել՝ նաեւ մեր մասնակցությամբ, երկրորդ դպրոցի կառուցմանն ենք բավական մասնակցություն ունեցել»: Համայնքապետը նաեւ ոգեւորված էր խմելու ջրագծի ողջ ցանցի վերակառուցմամբ, որն այս տարի ավարտվելու է (միջազգային կազմակերպության ծրագիր է):

Գյուղ մտնելիս տեսանք, որ ճանապարհն ասֆալտում են, բայց հետո հասկացանք, որ դա բուն գյուղի ներքին ճանապարհների հետ կապ չունի՝ նորոգվում է Գյումրի-Ախուրյան-Ջրառաս ճանապարհի հատվածը

Հազար աշակերտ ունեցող Ախուրյանը

մոտ 1000 աշխատաշեղ է ապահովում (չնայած ախուրյանցիք ասում էին, որ այդ հազարից մի երեսուն մարդ էլ ախուրյանցի չէ, բացի այդ էլ՝ գործարանը մի շաբաթ աշխատում, մի ամիս կանգնում է, հումք չկա, դրսի հումքով աշխատելն, ասում են, շահավետ չէ): Շինարարական կազմակերպություններ կան, կաթի գործարան, որը ոչ լրիվ հզորությամբ է աշխատում: Կարի գործարանը վերջին տարիներին չի աշխատում՝ պատվեր չունենալու պատճառով: Մարզին սպասարկող հիմնարկ-ձեռնարկություններ կան տեղակայված Ախուրյանի տարածքում (մարզպետարանի շենքում)՝ ոստիկանության բաժինը, սոցծառայությունը, հարկայինի մասնաճյուղը եւ այլն, որոնց աշխատակիցների 50 տոկոսը տեղացիներ են: Համայնքապետն ասում էր՝ արտագնա աշխատանքի մեկնողները տարեցտարի պակասում են՝ երեւի վիճակը լավանալու պատճառով, աշխատունակ տղամարդիկ, կանայք հիմնականում տարածքում են: Ախուրյանցիք հակառակն էին ասում՝ չեն պակասում, մեկնում են, քանի որ ընտանիք պահել չի լինում, ժամանակին գնացածներն էլ համայնքի հաշվառումից դուրս չեն եկել, լինում է նաեւ, որ ընտրությունների ժամանակ ցուցակներում իրենց մեռած հարազատի անվանն են հանդիպում. «Վերջերս նաեւ երկրի նախագահը այս հարցը բարձրացրեց. ես չէի ասի, որ Ախուրյանն առանձնանում է արտագաղթի տեմպերով, չէի ասի, որ Ախուրյանից ավելի շատ են արտագաղթում, քան մեկ այլ տարածքից, քանի որ Ախուրյանը բավականին հարմար բնակավայր է՝ հարթավայր է, բերրի վարելահողերով, 1500 հեկտար սեփականաշնորհված ջրովի վարելահողեր ունենք, շատ մարդիկ են աշխատանքին զուգահեռ նաեւ գյուղատնտեսությամբ զբաղվում: Հարուստ գյուղ չեմ համարում, որովհետեւ իրոք հարուստ գյուղ չէ՝ լավ տարածք լինելով հանդերձ, աղքատ էլ չէ: Տարածքում մուրացիկներ չկան՝ մյուս տարածքների հետ համեմատ, սա եւս ցուցանիշ է»:

Համայնքապետը նշում էր, որ պետական մակարդակով էլ Ախուրյանում մեծ ծրագրեր են իրականացվում, օրինակ՝ բնակարանային շինարարություն է սկսվել, մոտ 105 բնակարան է կառուցվում անօթեւանների համար, որոնք հաջորդ տարի սեպտեմբերին նախատեսված է շահագործման հանձնել:

Ախուրյանի բյուջեն 160 մլն դրամի սահմաններում է, որի սահմաններում, համայնքապետի խոսքով, բավականին լուրջ սպասարկում է կազմակերպված. համայնքի ենթակայության մոտ երեք մանկապարտեզ կա, համալիր մարզադպրոց՝ երկու մարզադահլիճով, մեծ գրադարանային համակարգ է գործում՝ 70 հազար կտոր գրականությամբ, կոմունալ ծառայությունն է համայնքի ենթակայության, արվեստի դպրոց կա. «Տարեկան 30-40 մլն (Համաշխարհային բանկի միջոցներով), որը համայնքի միջով է անցնում 4 կմ: Իսկ գյուղի ճանապարհները նույն փոշոտ եւ անձրեւի ժամանակ ցեխոտ ու անքարեկարգ են, երբեմն փորձ է արվում համայնքի միջոցներով դրանք կարգի բերել, բայց այդ գործը շատ ծախսատար է:

Ժողովուրդը բազմաթիվ դժգոհություններով է դիմում համայնքապետարան՝ կենցաղային հարցերից սկսած, ընտանեկան-ամուսնական վեճերով վերջացրած, բայց, իհարկե, հիմնական խնդիրները վերաբերում են սոցիալական վիճակին: 182 ընտանիք բնակարանի կարիք ունի, 21 ընտանիք արդեն մերժվել է, քանի որ ավելի վաղ կա՛մ բնակարանային բարելավում է ստացել, կա՛մ ընտանիքից մարդ է պակասել՝ մահացել են, մնացածինը ընթացքի մեջ է:

«Մարզպետարանում վերջին անգամ ի՞նչ հարց եք բարձրացրել», մեր հարցին ի պատասխան՝ Իգիթյանը նկատեց. «Էնքա՞ն խնդիրներ կան. Նոր Ախուրյան կտրված բնակավայր ունենք, մոտ երեք կիլոմետր համայնքից հեռու է, այնտեղ ճանապարհը խնդիր է, ինչը համայնքի ուժերով չենք կարող կառուցել»:

Ախուրյանում շատ երեւացող հարուստներ չկան, կան մարդիկ, որոնք մաքր բիզնեսով են զբաղվում՝ բավական խանութներ կային, սակայն այդ խանութների աճխույժ առեւտրին խանգարում է Գյումրիի մոտիկ լինելը. 100 դրամով տախտակ տանում է Գյումրի, որտեղ մեծ սուպերմարկետներում ընտրությունն ավելի մեծ է, իսկ ապրանքների գները՝ 20-30 դրամով ավելի էժան: Այն պահին, երբ Երեւանում բալը 600 դրամից չէր իջնում, Ախուրյանում եւ Գյումրիում կիլոգրամը 100-150 դրամով կարելի էր բալ գնել, սմբուկն ու լոլիկը անգամ 80 դրամ արժեին՝ Երեւանի այդ պահի 250 դրամ արժեքի դիմաց: Այնուամենայնիվ՝ ախուրյանցին դժվար է գտնում այդ դրամները. մաքր բիզնես, որ ասում են՝ օրվա հաց է ապահովում: Անասուն պահելու համար նպաստավոր պայմաններ չկան՝ վարելահողեր կան, որոնք նպաստավոր են գյուղատնտեսական մթերքների արտադրության համար, բայց եկամտաբեր չէ այլ բան մշակելը՝ համարյա միայն հացահատիկային մշակաբույսեր են աճեցնում: Ախուրյանցիները հաշվեցին, որ աճեցրած ցորենը շատ ավելի թանկ է նստում, քան եթե այլուր գնեն խանութից: Իրացնելու խնդիր չկա կարծես՝ Գյումրին մոտ է. Գյումրիին կցած լինելը Ախուրյանի համար ինչ-որ տեղ լավ է, ինչ-որ տեղ էլ՝ չէ: Եթե մի փոքր ավելի կտրված լիներ կենտրոնից՝ գյուղի առեւտուրն ու գյուղմթերքի արտադրությունն ավելի կզարգանային, խանութներն ավելի լավ կգործեին:

Ախուրյանում տասը տարի առաջ եղած մարդը, սակայն, մեծ տարբերություն չի զգա, եթե հիմա այցելի: Մեծ գյուղ, ավելի նման փոքր քաղաքի՝ մարդիկ ավելի շատ հակված են աշխատանք ունենալ, քան հողի հետ հույս կապել, չնայած ամեն տուն վարելահողերի իր հեկտարներն ունի ու եթե չի կարողանում վարել՝ վարձով տալիս է, կարողացողն է վարում-ցանում: Տնամերձերում, սակայն, համարյա բոլորն աճեցնում են բանջարեղենի իրենց ընտրանին, մի երկու ծառ՝ խնձորենի, բալենի: Երեկոյան եթե չոր է եւ ամառային շոգ օրվա ավարտ, ախուրյանցիք զբոսնում են իրենց անբարեկարգ փողոցներում, հովանում-վերադառնում: Սակայն մեծ մասամբ զբոսնելու ժամանակ չունեն՝ որը տնամերձում է, որը հացահատիկի դաշտում: Սակայն երիտասարդներից շատերը տներում նոր հեստքրություն ունեին՝ ինտերնետն ու «Օդնոկլասնիկը», եւ անպայման նայում էին լրատվական կայքերը, որը հաճելիորեն զարմացրեց: Գյուղ մտնելիս էլի նախ Սովետի ժամանակների նման եւ այն ժամանակ կառուցված ծավալաշաբական մարզպետարանին ես դեմ առնում (նախկինում շրջկոմի շենքն էր), հետո անցյալը հիշեցնող մի աշխատավորուհու արձանի, ու նորությունը Ախուրյան մտնելու ճանապարհի եւ գյուղի գլխավոր ճանապարհի երկու կողմերի խանութներն են: Մարդիկ, չնայած բազմաթիվ խնդիրներին, այնպես խեղճ չեն թվում, ինչպես մեր սահմանամերձ կամ հեռավոր գյուղերում՝ ինչ-որ թեթեւություն կա նրանց պահվածքում, հումոր՝ խոսվածքում, անհուսության կամ անելանելիության ոչ մի սվեր: Դա չի նշանակում, որ նրանք ավելի լավ են ապրում կամ պակաս են քննադատում գյուղի ղեկավարությանը, ուղղակի մեծ գյուղում եւ լավն է շատ, եւ վատը կա, Գյումրիի մոտ լինելն էլ մի բան ավելացնում է հույսին՝ շատերն ամեն օր Գյումրի են գնում աշխատանքի, իսկ ախուրյանցի տղամարդկանց ռուսաստաններից ուղարկած դրամն իր պտույտն է անում եւ օգնում ախուրյանցիներին չկորցնել կենսուրախությունը:

Ամեն տարի Ախուրյանում հարյուրից ավելի երեխաներ են առաջին դասարան գնում. «Ախուրյանն ունի գործող լավ նախակրթական համակարգ՝ երկու նախակրթարանները բոլոր չափանիշներին համապատասխան են, մեկն է, որ նորոգման կարիք ունի, ունենք լավ կրթական համակարգ, երեք միջին դպրոց, մեկ ավագ դպրոց, մեկ վարժարան: Մարզում փաստորեն չորս ավագ դպրոց կա, որից մեկն Ախուրյան համայնքում է: Ունենք լավ առողջապահական համակարգ՝ մեկ պոլիկլինիկական ծառայություն ունենք, մեկ ստացիոնար հիվանդանոց, երկուսը միասին առողջության կենտրոն են դարձել, մարզի պրակտոլոգիայի կենտրոնը նաեւ Ախուրյանում է: Բացի սրանից՝ ՀՕՄ-ի մոր եւ մանկան կենտրոնն է այստեղ, որը մինչեւ օրս ՀՕՄ-ը ֆինանսավորում եւ աջակցում է, դրան կից մի երկուերեք տարի առաջ կառուցվեց նաեւ ծննդատունը. բավականին հաջողված, լուրջ կենտրոն է, լոկալ ջեռուցումով, հիվանդասենյակների հարմարավետ կոմունալ հարմարություններով, վիրահատարանով, վիրակապարանով եւ բարձրակարգ սարքավորումներով: Մամոգրաֆիայի եւ համակարգչային (տոմոգրաֆիա) հետազոտման սարքավորումներ եւս կան (Ֆրանսիայից բերված): Այս կենտրոնը միայն Ախուրյանին չի սպասարկում, այլ նաեւ տարածաշրջանի գյուղերին: Ախուրյանի ծննդատանը նաեւ Գյումրիից են ծննդաբերում», իր ղեկավարած գյուղի պատմությունն ավարտում է համայնքապետ Իգիթյանը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ավելացել է մսի եւ կաթի, նվազել՝ ձվի արտադրությունը

Իսկ Հնդկաստանից միս ներմուծվում է միայն մեր երկրի ներկայացուցչի թույլտվությամբ

Գյուղատնտեսության փոխնախարար **Գրիշա Բաղյանը** երեկ «Հայելի» ակումբում անդրադարձավ Հայաստանի անասնապահության ոլորտի կացությանը: Ըստ փոխնախարարի, այս տարվա առաջին 7 ամիսների տվյալներով՝ աճել է կենդանիների գլխաքանակը եւ համապատասխանաբար կենդանական մթերքների արտադրությունը, բացառությամբ ձվի: Նրա ներկայացրած տվյալներով, խոշոր եղջյուրավորների գլխաքանակն ավելացել է 1600-ով, մանր եղջյուրավորներինը՝ 23500-ով, խոզերինը՝ 3500-ով: Դրան զուգահեռ՝ կաթի արտադրությունն այդ ընթացքում ավելացել է 3 հազար տոննայով եւ կազմել 400 հազար տոննա, մսինը՝ 1500 տոննայով եւ կազմել 53 հազար տոննա, իսկ ձվինը նվազել է 20 տոկոսով եւ կազմել 380 մլն ձու: Ձվի արտադրության նվազումը Գրիշա Բաղյանը բացատրեց անցյալ տարի արձանագրած գերարտադրությամբ, որի պատճառով արտադրողները կորուստներ կրեցին եւ նույնը թույլ չտալու համար մոթքեցին հավերի որոշակի գլխաքանակ:

Հայաստանում դաբաղ հիվանդության վերաբերյալ տրված հարցերին պատասխանելով՝ գյուղատնտեսության փոխնախարարն ասաց, որ Հայաստանում այդ հիվանդություններից կենդանիների անկման դեպքեր չեն եղել: Նա հայտնեց, որ հիշյալ հիվանդությունը տարածված է հարեւան երկրներում, եւ նրա մուտքը Հայաստան կանխարգելելու համար իրականացվել են հակահամաճարակային միջոցառումներ: Միաժամանակ, Գրիշա Բաղյանը փաստեց, որ եղել են կենդանիների անկման դեպքեր, բայց այլ հիվանդություններից:

Խոսելով մսի եւ կաթի գների բարձրացման մասին, գյուղատնտեսության փոխնախարարն ասաց, որ դա արդյունք է միջազգային գների բարձրացման: Մասնավորապես, կաթնամթերքի միջազգային գինն աճել է 20 տոկոսով, Հայաստանում՝ 7-8 տոկոսով, մսինը՝ 15 տոկոսով, Հայաստանում՝ 11,5 տոկոսով:

«Ազգի» հարցն առնչվում էր Հնդկաստանից Հայաստան ներմուծվող գոմեշի մսին, որի անվտանգության վերաբերյալ մեկ-երկու տարի առաջ կառավարությունում եղան քննարկումներ, վարչապետի կողմից տրվեցին հրահանգներ: Մեր հարցին, թե ինչպիսի՞ն է վիճակն այժմ, գյուղատնտեսության փոխնախարարը պատասխանեց, որ ներկայումս Հնդկաստանում գործող 5 ընկերություններից է միայն թույլատրված միս ներմուծել՝ այնտեղ գտնվող Հայաստանի ներկայացուցչի թույլտվության դեպքում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Մերձերկխոսական մեկնաբանություններ

Իշխանություն-ՀԱԿ երկխոսության ձգվող ռաունդներին զուգահեռ՝ լուրջ-լուրջ, իսկ երբեմն էլ զավեշտալի մերձերկխոսական մեկնաբանություններ են հնչում, որոնք լցնում են քաղաքական կյանքի այս պահին դատարկ զամբյուղը: Երեկ, օրինակ, «Ժառանգություն» խմբակցության ղեկավար **Սյոռոպա Սաֆարյանը**, նկատի ունենալով 86 էջ ՀԱԿ-ի, 135 էջ իշխանության հիմնավորումները՝ արտահերթ ընտրություններ լինել-չլինելու վերաբերյալ, բնորոշեց, թե ամեն ինչ վերածվել է համաշխարհային ընթերցանության երեկոյի, իսկ ողջ ամառվա ընթացքում էլ իշխանության եւ ՀԱԿ-ի ուշադրությունը այդ ներկայացմանն էր ուղղված, որն ապագա չունի, դրանից երկրին ուղղված մարտահրավերները չեն նվազում: Բացի դրանից, ըստ Սաֆարյանի, ՀԱԿ-ի եւ իշխանության դիրքորոշումները զարաբաղյան խնդրի հետ կապված, ինչպես նաեւ ներքաղաքական դաշտում գրեթե չեն տարբերվում, ուրեմն եւ նոր ընտրություններին ընդառաջ՝ ՀԱԿ-ն այլընտրանք չի կարող ընկալվել իշխանությանը: Այդպիսին կարող է ընկալվել ամեն ուժ, բայց ոչ ՀԱԿ-ը: Այս մտքերին ափալ-թափալ պատասխանել է Տեր-Պետրոսյանի մամուլի խոսնակ **Արման Մուսինյանը**, ով թեւաթափ է եղել «տրամաբանության նման բացակայությունից եւ փաստերի նման խեղաթյուրումից», թե՝ «Սյոռոպան հավանում է խլել իր ավագ հանրապետական գործընկերոջ դափնին». Ս. Սաֆարյանը ասուլիս էր տալիս ՀՀԿ-ական **Արտակ Զաքարյանի** հետ, որն ասում էր, թե երկխոսությունը կայանում է:

Իսկ Հանրային խորհրդի անդամ **Խոսրով Հարությունյանը** երեկ դեռ ողջունում էր երկխոսությունը՝ որպես «հանրային կյանքի կազմակերպման լուրջ հնարավորություն», ընդ որում, ըստ նրա, քաղաքական իրականության մեջ որակապես նոր գործընթաց է տեղի ունենում՝ «բանակցում են ոչ թե իշխանությունն ու խորհրդարանական ընդդիմությունը, այլ իշխանությունն ու արտախորհրդարանական քաղաքական ուժը», իսկ ընդհանրապես՝ սա նոր մշակույթ է քանանյա հանրապետության՝ անպտուղ առճակատումներով լի պատմության մեջ:

Իսկ ահա Ժողովրդական կուսակցության նախագահ **Տիգրան Կարապետյանը** երկխոսությունը շատ գեղեցիկ սցենարով շոու անվանեց, կողմերին էլ՝ բիզնեսով զբաղվող. «Այսօր ամեն ինչ արվում է բիզնեսի համար, փող են սարքում տղաները», ասաց:

Ահա այսպիսի մերձերկխոսական մեկնաբանություններ, որոնք, երկխոսության՝ ամեն ռաունդ անպտուղ 4-5 ժամերի անվերջ ձգելու պարագայում կարող են առհասարակ հասարակությանը մղել՝ անլուրջ վերաբերվելու կատարվողին:

Մ. Խ.

Եկեղեցին իր առաքելության մեջ է

Որպես Հայ առաքելական եկեղեցու զավակ՝ ուշադրությամբ հետևում եմ մեր եկեղեցուն առնչվող հրապարակումներին, որտեղ, ցավոք սրտի, հաճախ արտահայտվում են հիասթափեցնող, հոռետեսական, պառակտիչ ու տրամաբանությունից զուրկ մտքեր: Այս վտանգավոր ու շինծու երևույթին ժամանակին ու համարժեք չհակազդելու դեպքում այն կարող է վտանգավոր լինել ազգաթափանման համար եւ գայթակղություն՝ բարեպաշտ հավատացյալների համար: Բարեբախտաբար մեր իմաստուն ժողովուրդը կարողանում է տարբերել թացը չորից եւ վերջին ժամանակներում, հակառակ որոշ ուժերի ջանքերի, առավել ջանասիրաբար է նեցուկ լինում Եկեղեցուն: Դժվարությամբ, բայց ամուր հավատքով կարողանում են դիմադրել այն ավերիչ ուժին, որ փորձում է պառակտել ազգի մեջ եղբայրասիրությունն ու հանդուրժողականությունը, հայրենասիրությունն ու եկեղեցասիրությունը: Եկեղեցու «թերությունը» թերեւս այն է, որ իր ազգանվեր գործունեության մասին համեստորեն չի բարձրաձայնում ու «Տժվժիկ»-ի պատմություններով չի լցնում իր տեղեկատվական ցանցը, ինչից օգտվելով որոշ անհատներ ու կազմակերպություններ մեր բարեպաշտ ժողովրդին հրամցնում են չափազանցված ու նենգափոխված պատմություններ՝ փորձելով հասարակության մեջ խուճապ առաջացնել ու ստեղծել իրենց համար շատ ցանկալի անվստահության մթնոլորտ:

Կանխելու համար նորանկախ Հայաստանում մարտնչող հակաեկեղեցական տրամադրության ու աղանդավորական շարժումների համար բարենպաստ մթնոլորտ ձեւավորվելու միտումը՝ բոլոր առողջ ուժերը պետք է միասնական գործեն: Յուրաքանչյուր նախանձախնդիր քրիստոնյայի համար եկեղեցու հեղինակությունը իր հեղինակությունն է, որովհետեւ եկեղեցին ժողովուրդն է, եւ ամեն մի խոսք, որ ասվում է եկեղեցու դեմ, ասվում է ժողովրդի դեմ: Պետք չէ ինքնախաբեությամբ զբաղվել:

Անարդար է թյուր հասկացված որոշ երեւույթների համար լուսանցքներ թափել ու մեղադրանքներ հնչեցնել եկեղեցու հասցեին: Անարդար է նաեւ ազնիվ մղումներով բարեարներին մեղադրել «անգրագետ» հայրենասիրության մեջ:

Կասկածելի կազմակերպությունների ի հայտ գալն ու բուռն ներքաղաքական ու եկեղեցու նկատմամբ խմորումներն իրար համադրելով ու վերլուծելով թերեւս դժվար չէ եզրակացնել, որ հայ ազգի միասնականությունն ու հզորացումը որոշ անհատների ու կազմակերպությունների նպատակների մեջ չեն տեղավորվում: Ենթադրելի է, որ կան ուժեր, որոնք որոշ ակնկալիքների հովերով տարված, եկեղեցական պարարտ հողի վրա ջանասիրաբար որոմ են ցանում, իսկ խնդրին ոչ բոլորովին իրազեկ բարեմիտներ էլ ընկնում են մոլորության մեջ՝ մտածելով թե օգտակար ծառայություն են մատուցում եկեղեցուն: Կարծում եմ շատերի ակտիվության մղիչ ուժը առավել հզոր ու առավել հեղինակավոր Հայ առաքելական սուրբ եկեղեցի ունենալու տեսլականն է: Հոդվածագիրները նախ եւ առաջ կատարում են իրենց մտքի պտտվերը, սակայն պետք է զգույշ լինել եկեղեցականներից ավելի եկեղեցասեր երեւալու գայթակղությունից:

Եկեղեցու գործունեությունը ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է ճիշտ տեղեկացված լինել, հաղթեղ եզրահանգումներ ու, մանավանդ, սխալ հայտարարություններ չանել: Անտրամաբանական ու անարդար է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին մեղադրել եկեղեցավնաս արարքների կամ արտահայտությունների մեջ: Ամենուրեք կարող են լինել թյուրիմացություններ, որոնց հաղթահարումը կատարվում է միայն միասնական ուժերով:

Եկեղեցին մի կառույց է, որտեղ ազգանվեր ծրագրերը իրականացվում են տրամաբանական հաջորդականությամբ: Ազգային արժեքների պահպանման առաքելությունը Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը իրականացնում է հիմնվելով արժեքների եւ արժանների նկատմամբ հավատարմության, առողջ հավատքի ու առողջ բանականության վրա: Այս ամենի մեջ համոզվելու համար պարզապես պետք է օգտվել վստահելի աղբյուրներից, մասնավորապես՝ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական աղբյուրներից եւ ոչ թե կերած եւ ուրացած եկեղեցականներին ու ապակողմնորոշող որոշ պատմաբաններին լսել:

Եթե հայ իրականության մեջ ազգային արժեքները պահպանելու գործում իրեն պատասխանատու համարող ամեն մի անհատ կամ կառույց իր գործով զբաղվի նույն նվիրումով ու հետեւողականությամբ, ինչպես դա անում է Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը, ապա կհասկանա, որ Հայ առաքելական եկեղեցին իր սրբազան առաքելության մեջ է:

ԳԵՆԱՊԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Ասվածաբան

Հնամենի բերդի գաղտնիքները

Քաբաթաղի այսօրվա շրջանը, որն իր մեջ է առել պատմական Մեծ Հայքի Սյունիք եւ Արցախ նահանգների մի քանի գավառներ, հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Արդեն հայտնի բազում հուշարձաններին օրեցօր ավելանում են նորերը: Ընդհանրապես հուշարձանների մեծ մասը գտնվում է հյուսիսային թեւում՝ նախկին Աղահեջք (հետագայում՝ Քաբաթաղ, Խոժոռաբերդ), Վայկունիք գավառներում: Իսկ հարավում պատմական հուշարձանները հիմնականում սփռված են Որոտան գետի ավազանում՝ Քաշունիք գավառում: Ըստ 7-րդ դարի «Աշխարհացույց»-ի տվյալների՝ Մեծ Հայքի Սյունիք նահանգի 12 գավառներից մեկը Բաղքն էր: Միջնադարում գավառը բաժանվում է արեւելյան ու արեւմտյան մասերի եւ հանդես գալիս նոր անուններով: Արեւելյանը կոչվում է Քաշունիք, իսկ արեւմտյանը՝ Աձեն կամ Աձան: 13-րդ դարից Քաշունիքը կոչվել է նաեւ Բարկուշաս:

Նույն անունով տարածում նաեւ բերդ է եղել: 18-րդ դարի կեսերից հիշյալ տարածքները հայաթափ եղան՝ ընկնելով մահմեդական ցեղերի տիրապետության տակ, իսկ խորհրդային տարիներին փոխվեցին տեղանունները, տարածում առաջացավ Ղուբաթլուի շրջանը՝ համանուն կենտրոնով:

Վերջերս ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության վարչության հուշարձանների պահպանության եւ ուսումնասիրության բաժնի վարիչ Սլավա Սարգսյանի եւ ԱրՊՀ դասախոս, ազգագրագետ Լեռնիկ Հովհաննիսյանի հետ այցելեցինք Որոտանի աջափնյա Երկաթավորք (Դամրչիլար) գյուղ, որտեղ պահպանվել են մահմեդական 2 դամբարան (ըստ Ղեւոնդ Ալիշանի՝ դրանք 14-15-րդ դարերի են) եւ 17-18-րդ դարերի միաթռիչք քարակերտ կամարակապ կամուրջ, որն ունի 9 մետրից ավելի երկարություն, իսկ լայնությունն է 3,10 մետր է: Ունի արաբատառ արձանագրություն:

Գյուղից արեւմուտք բարձր բլուրներ են, որոնցից մեկի վրա հնամենի բերդ կա: Ըստ տեղեկությունների՝ այս տարածքում է գտնվում Պահու բերդը. մտածում ենք՝ այդ ամրոցն է: Որոշում ենք բարձրանալ: Որոտանի վտակ Քաշունի (Չայ Ջամի) գետի ձախ ափով շարժվում ենք առաջ եւ վերջապես հասնում բերդը պահող բարձունքի ստորոտ:

Բարձրանում ենք վեր ու կանգնում բերդի պարիսպների տակ: Պարզվում է, որ սա ուրիշ բերդ է. Պահու բերդն աշտարակներ ունի, իսկ այստեղ դրանք բացակայում են. եղածներն էլ ցածր են՝ ի տարբերություն Պահու բերդի: Պարիսպները, որ գտնվում են արեւելյան կողմում, ունեն 2,5 մետր հաստություն, բարձրությունը տարբեր է, կառուցված են մշակված քարով, պահպանվել է մոտ 250 մետր երկարությամբ, իհարկե՝ տեղ-տեղ փլված: Հյուսիսարեւմտյան կողմում ժամանակին խանդակներ են փորել, արեւմտյան մասում բարձրաբերձ ժայռեր են, իսկ հարավային մասում բլուրը թեքությամբ իջնում է ցած ու հասնում Քաշունի գետին: Ընդհանուր առմամբ բուն բերդն ունի 250-ից ավելի երկարություն, իսկ միջին լայնությունը կազմում է մոտ 30 մետր: Մուտքը հարավարեւելքից է, ունի 2,5 մետր լայնություն: Մի կողմում պահպանվել են աշտարակի քանդված պատերը, իսկ մյուս կողմում՝ մի շինության պատեր՝ մոտ 80 քմ մակերեսով. երեւի պահապանների զորանոցն է եղել: Նման 10 շինություններ տարածքում պահպանվել են՝ տարբեր չափերով, կիսաքանդ: Բերդը պահող բլուրը պատված է սալաքարերով, ինչպես Վանքասարը, որի վրա է գտնվում Տիգրանակերտի ամրոցը: Այս բլուրն էլ է նման Վանքասարին: Նմանություն կա նաեւ, որ այստեղ էլ, ինչպես Տիգրանակերտում, տեղի սալաքարերն են կտրել ու օգտագործել որպես շինանյութ: Պահպանվել են միջնադարի վարպետների գործիքների հետքերը. տեղ-տեղ կտրված քարերը մնացել են, որոշ քարեր էլ, որոնք ունեն 1 մետրից ավելի երկարություն ու լայնություն, չեն տեղափոխվել:

Բերդի դիմացի մեկ այլ բլրի վրա միջնադարյան մատուռ կա: Չափագրումներ կատարելուց հետո բերդի հարավային մասով իջնում ենք ցած ու հասնում Քաշունի գետին: Անցնելով գետը՝ բարձրանում ենք վեր ու հայտնվում մի հարթության վրա: Պարզվում է, որ դամբարանադաշտ է: Կարելի է ենթադրել, որ շատ վաղուց են այստեղ բնակվել մեր նախնիները, որ տարածքում մեծ բնակավայրեր են եղել, եւ ժողովրդի անվտանգությունն ապահովելու համար բերդեր են կառուցել: Առայժմ հաստատ հնարավոր չէ ասել, թե ինչ անուն է ունեցել մեր ուսումնասիրած ամրոցը, սակայն ժամանակագիրների աղբյուրները ուսումնասիրելով՝ կարելի է ճշտել:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲՈՔՈՅԱՆ

ԵՅՈՒ-ՅՈՐՔ

Խաժակ արք. Պարսամյանի արձագանքը Թուրքիայում Մ. Նահանգների նորանշանակ դեսպանի արտահայտություններին

Թարգմանաբար ներկայացնում ենք Հայ եկեղեցու Ամերիկայի արեւելյան թեմի լրատվական գրասենյակից տարածված հաղորդագրությունը, որտեղ թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանի նամակի ամբողջական տեքստն է՝ ուղղված Մ. Նահանգների պետքարտուղար Հիլարի Քլինթոնին՝ ի պատասխան Թուրքիայում Մ. Նահանգների նորանշանակ դեսպան Ֆրենսիս Ռիկարդոնեի հավատիացումների:

Նյու Ջերսիից սենատոր Ռոբերտ Մենենդեսի հարցին, թե «Ի՞նչ վիճակում են ներկայումս 1915-ից առաջ Թուրքիայում գործող ավելի քան 2000 քրիստոնեական եկեղեցիները», վերջինս պատասխանել էր գրավոր. «Դրանց մեծ մասը այսօր էլ շարունակում է գործել որպես եկեղեցի: Կարեւորներից մի քանիսը գործում են որպես թանգարաններ, իսկ մնացածները անբարեկարգ վիճակում են կամ էլ մզկիթների են վերածված չօգտագործվելու հետեւանքով»:

«Իմ ջերմ ողջույններն ու օրհնությունները Ձեզ, որ շարունակում եք Ձեր ծառայությունները մատուցել մեր երկրին: Ամերիկայի Հայաստանյայց եկեղեցվո արեւելյան թեմի հոգեւոր առաջնորդի իմ հանգամանքով, գրում եմ Ձեզ այն արտահայտությունների կապակցությամբ, որ Թուրքիայի Հանրապետությունում նախագահ Օբամայի կողմից Մ. Նահանգների դեսպան առաջադրված Ֆրենսիս Ռիկարդոնեն է կատարել իր թեկնածությունը հաստատելու լսումների ժամանակ:

Տեղեկացնեմ, որ մենք միշտ էլ ընդհանուր առմամբ պաշտպանել ենք Թուրքիայի եւ Հայաստանի հանրապետությունների միջեւ բնականոն հարաբերությունները առավել բարձր մակարդակի բարձրացնելու Մ. Նահանգների կառավարության ջանքերը: Մենք նաեւ մեծապես ողջունում ու գնահատում ենք Ձեր անձնական արդյունավետ դերակատարությունը այդ նախաձեռնություններում:

Այդ ջանքերը նկատի ունենալով՝ դժվար է հասկանալ դեսպան Ռիկարդոնեի հաստատումները պատմական Հայաստանի եկեղեցիների եւ Թուրքիայի այլ քրիստոնյա եկեղեցիների ներկա կարգավիճակի մասին: Այդ հարյուրավոր եկեղեցիների կորուստը, անտեսումն ու լիակատար ավերումը, ինչպես նաեւ մեր արբատեղերից շատերի վերածումը մզկիթների՝ հայերի համար խիստ ցավալի խնդիր են, անընդհատական հիշեցում 1915 թվի ցեղասպանության հետեւանքով մեր կրած մարդկային կյանքի կորուստների եւ ավերածությունների:

Դեսպան Ռիկարդոնեն իր ակնարկներով խորապես վիրավորեց ամերիկահայերին, վերաբացելով հին, զգայուն վերքերը, եւ դրանով իսկ խոչընդոտելով սրիացման ասիճանական գործընթացին: Ամենայն կարեկցանքով (ենթադրում ենք, որ) գուցե դեսպանը անտեղյակ է որոշ փաստերից: Սակայն երկրի պատմության մութ ու լուսավոր կողմերին տիրապետելը էական նշանակություն ունի այդ կարեւոր եւ բարդ տարածաշրջանում Մ. Նահանգներին դիվանագիտական արդյունավետ ծառայություն մատուցելու համար:

Կրկնում եմ, մեր ընդհանուր պաշտպանությունն է ձեր ջանքերին, տիկին պետքարտուղար, եւ մեր ցանկությունը այդ ամբողջ տարածաշրջանում իսկական առաջընթաց արձանագրելու, որ մեզ դրդեցին գրելու այս նամակը: Համոզված եմ, որ Դուք համապատասխան ուշադրություն կդարձնեք նշված մտքերին՝ Թուրքիայում, Հայաստանում եւ ընդհանրապես ամբողջ աշխարհում Ամերիկայի կարեւորագույն դերի վերաբերյալ որոշումներ ընդունելիս:

Տիկին պետքարտուղար, Ձեր բոլոր նախաձեռնություններում Դուք վայելում եք մեր ջերմ ողջույններն ու պաշտպանությունը: Թող Տերը զորացնի եւ առաջնորդի Ձեզ մեր սիրելի երկրին Ձեր ընձեռած ծառայություններում:

Մնամ աղոթող, հոգեւոր առաջնորդ՝

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

Պատմական Մուսա լեռան Վագրֆլը գյուղի երիտասարդները Գուգարաց թեմում

Գուգարաց թեմի առաջնորդ Սեմուել եպիսկոպոս Ջուլջյանի վաղեմի ցանկությունն էր, որ Հայաստանի եւ Թուրքիայի հայության, հատկապես երիտասարդության միջեւ միմյանց ճանաչելու նպատակով փոխադարձ այցելություններ լինեն: Ահավասիկ, թեմական առաջնորդի հովանավորությամբ օգոստոսի 18-ին թեմապատկան «Ծիծեռնակ» ճամբարում հյուրընկալվեցին Թուրքիայի միակ հայկական Վագրֆլը գյուղից չորս երիտասարդներ: (Վագրֆլը Պատմական Կիլիկիայի Մուսա լեռան յոթ գյուղերից մեկն է, ուր ապրում են 130 հայեր՝ պահպանելով քրիստոնեական մշակույթը եւ մուսալեռցիների բարբառը: Գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում միայն հինգ տաղավար տոներին են պատարագներ մատուցվում՝ Սամբուլից այցելող հոգեւորականների կողմից):

Երիտասարդները Հայաստանում կմնան մինչեւ օգոստոսի 31-ը: Այս ընթացքում Հայաստանը մոտիկից ճանաչելու նպատակով կայցելեն սրբավայրեր, թանգարաններ, պատկերասրահներ, հանդիպումներ կունենան թեմի հոգեւորականների, Եկեղեցասեր երիտասարդաց միության անդամների հետ: Հանդիպումներ կունենան նաեւ Հայաստանում «Մուսա լեռ» հայրենակցական միության երիտասարդների եւ Մուսա լեռ գյուղի բնակչության հետ:

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում մասնակցել են կիրակնօրյա պատարագին, շրջել գանձատանը եւ Մայր տաճարի թանգարանները, այցելել Հռիփսիմե, Գայանե վանքեր եւ Սաղմոսավանք: Առաջիկա օրերին նախատեսված է այցելել նաեւ Սեւան, Երեւան, Խոր Վիրապ:

Երիտասարդներն առաջին անգամ են Հայաստանում, եւ այդ այցելությունն, անկասկած, խթան կհանդիսանա, որ Վագրֆլը գյուղից պարբերաբար Հայաստան այցելեն նաեւ այլ երիտասարդներ:

Նրանք արդեն հաստատել են շրջայց կատարել Վանաձորի եկեղեցիներում, քաղաքի տեսարժան վայրերում, երկրագիտական եւ կերպարվեստի թանգարաններում, իսկ օգոստոսի 20-ին ուխտագնացության մեկնեցին Հաղպատ եւ Սանահին:

Օգոստոս 22-ին կազմակերպվեց հանդիպում Գուգարաց թեմի Երիտասարդաց միության անդամների հետ, չորս հայ երիտասարդները հաղորդակցվեցին վանաձորյան լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվեցին երիտասարդությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, եւ այս մտերմիկ ու ջերմ կաղը պահելու համար միմյանց փոխանցվեցին հասցեներ:

Հյուրերի առօրյան հագեցած է հատկապես «Ծիծեռնակ» ճամբարում, ուր ճամբարականների հետ արդեն ձեւավորել են ջերմ ու անմիջական հարաբերություններ: Երգ ու պարին, ուխտագնացություններին զուգահեռ՝ երիտասարդների մեջ խորանում է նաեւ հայերենի լեզվիմացությունը:

Թեմական առաջնորդից երիտասարդները ստացել են հուշանվերներ՝ որպես հուշ Հայաստանում անցկացրած հիանալի օրերի:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

ԱԴՐԲԵՋԱՆ

Զգում է «հավերժության»

Հին աշխարհի հայտնի պետական, ռազմական գործիչները պատմության մեջ հիշվում են նաեւ իրենց ասույթներով: Ասենք՝ «Եկա, տեսա, հաղթեցի», «Եվ դո՞ւ, Բրուտոս», «Ռուբիկոնն անցա» եւ այլն:

Հավանաբար նրանց նմանվելու մոլուցքն է պատճառը, որ հատկապես խորհրդային դարաշրջանի «առաջնորդները» նույնպես «թեւավոր մտքեր» էին արտահայտում: Լենինն, օրինակ, ասում էր, որ «ամեն մի խոհարար պիտի սովորի երկիր կառավարել»: Իհարկե, դրանից խոհարարները բոլորովին էլ չէին վերափոխվում պետական կառավարիչների, բայց փոխարենն առաջնորդի միտքը միլիոնավոր օրինակներով բազմացվում եւ տարածվում էր: Ստալինյան «Մարդը ամենաթանկ կապիտալն է» ասույթով ցուցադրասառները զարդարում էին խորհրդային երկրի քիչ թե շատ աչքի ընկնող բոլոր շենք-շինությունները: Նույն տարիներին, սակայն, Ստալինը միլիոնավոր անմեղ քաղաքացիների ախտորում էր հեռավոր վայրեր կամ ուղղակի գնդակահարում կամ փտեցնում համակենտրոնացման ճամբարներում: Իսկ ասույթը տարածվում-տարածվում էր:

«Հանճարեղությամբ» Ստալինի հետ մրցակցում էր «չինացիների աստված» Մաո՝ Մաո Ցզե Դունը: Մի անգամ նա ասել է. «Սա այն կամուրջն է, որ գետի այս ափը կապում է մյուս ափին»,- եւ չինական բոլոր թերթերը հաջորդ օրը լույս են տեսել այդ կարգախոսով: Իսկ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել. եթե Մաոն չասեր, չինացիներից ոչ ոք չէր հասկանա, որ կամուրջն իրար է կապում գետի հակադիր ափերը: Թեեւ նույն չինացիներն առանց Մաոյի օգնության հազարամյակ առաջ կառուցել էին Չինական մեծ պարիսպը:

Իմաստախոսությունների «վարպետ» էր նաեւ Բրեժնեւը: Լինելով Ադրբեջանում եւ արժանանալով շեֆ ընդունելության եւ թանկարժեք նվերների, խորհրդային երկրի ծեր առաջնորդն այդ ամենից տպավորություն էր ստացել, որ «առանձին վերցրած մեկ հանրապետությունում կոմունիզմի կառուցումն ավարտված է», եւ ասել էր. «Լայն քայլերով է ընթանում Ադրբեջանը»: Բրեժնեւն, իհարկե, չէր կարող իմանալ, որ իր ասույթը Կովկասում մի նոր անեկդոտի առիթ է դառնալու. «Լայն քայլերով է ընթանում Ադրբեջանը՝ Վրաստանի եւ Հայաստանի խանութներով»,- որի համար Ադրբեջանում մարդկանց վերցնում եւ դատում էին «թանկագին Լեոնիդ Իլյիչին վիրավորելու», իրականում՝ տնտեսական հավելագրումներն ու աչքակապությունները ծաղրելու համար:

Թերեւս այդ պատճառով է, որ անկախ Ադրբեջանում նույնպես ասույթները հարգի են: Օրինակ՝ «Մեր անկախությունը վերջնական է եւ անշրջելի»: Սա Հեյդար Ալիեւի իմաստախոսություններից է: Եթե լրջորեն մոտենանք, ապա դժվար չի լինի հասկանալ, որ Հեյդար Ալիեւը երկրի անկախությունը կապել է իր քաղաքական վերածննդի հետ: Եվ այսօրվա իշխանությունն էլ ամեն ինչ անում է, որպեսզի մարդկանց հիշողությունից ջնջվեն Ադրբեջանի պատմության ոչալիեւյան դրվագները: Անկախ Ադրբեջանի պատմությունն, ըստ այդմ, սկսվում է 1993 թ. ամռան իրադարձություններից, այլ ոչ թե 1991-ի աշնանն ընդունված «Ադրբեջանական հանրապետության պետական անկախության մասին» սահմանադրական ակտից: Եվ դա այնքան է արմատավորվել, որ Բաքվի կոմունալ ծառայության պատասխանատուները հանգիստ խղճով վերցնում եւ անջատում են հանգուցյալ Էլչիբեյի՝ Ադրբեջանի երկրորդ նախագահի ընտանիքի գազը, ջուրը եւ լույսը՝ «գոյացած պարտքերի դիմաց»: Կա՞ աշխարհում մի երկրորդ երկիր, որտեղ էքս-նախագահի ընտանիքն այնքան ծայրահեղ աղքատ պիտի, որ չկարողանա մուծել կոմունալ ծախսերը:

Իրոք, ամեն մի պատասխանատվությունից եւ բարոյականությունից Ալիեւների կլանի անկախությունը «վերջնական է եւ անշրջելի»: Այնքան, որ էքս-նախագահ Այազ Մութալիբովը, Բաքվում հարազատ որդուն հողին հանձնելուց հետո «ստի թելադրանքով» այցելել է «համազգային առաջնորդ Հեյդար Ալիեւի եւ Զարիֆա խանում Ալիեւայի շիրիմներին»: Իսկ այդ նույն օրերին գործող նախագահ Իլհամ Ալիեւը, շրջելով Բաքվի մերձակա բանվորական ավաններով, իրեն թույլ է տվել մեծերի նման «անմահության ձգտել» եւ ասել է. «Երկրի բարեկեցությունը կախված է ամեն մի ավանի բարեկեցությունից»:

Պետք է համոզված լինել, որ «պալատական գիտնականներ» արդեն տիրաժավորել եւ տարածել են այս «դարակազմիկ միտքը»: Բայց թե գործնականում ի՞նչ նշանակություն ունի Իլհամ Ալիեւի «իմաստախոսությունն» ադրբեջանական ժողովրդի բարեկեցության բարձրացման մեջ՝ այդ մասին հնարավոր կլինի դատել շատ ժամանակ անց: Միայն ասենք, որ երբ Իլհամ Ալիեւն ասել է այդ «իմաստությունը», նույն օրը Թարթառի շրջանի Բեգում Սարով գյուղում 14-ամյա մի աղջիկ ինքնասպանություն է գործել: Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ «սոցիալական թշվառությունից դրդված»: Մեկնաբանություններն ավելորդ են:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Երկրաշարժ ԱՄՆ-ի արեւելքում

ԱՄՆ-ի արեւելյան ափին երեկ տեղի է ունեցել 5,9 մագնիտուդով երկրաշարժ, որի հետեւանքով խոշոր քաղաքների շենքերից կաստրվել են զանգվածային տարհանումներ, հաղորդում է BBC-ն:

Սորգեցյա ցնցումներն զգացվել են Վաշինգտոնում եւ Նյու Յորքում: Պենտագոնի եւ Կոնգրեսի շենքերից դուրս են բերվել բոլոր մարդիկ: Վաշինգտոնում զգալի վնասվածքներ են ստացել Ազգային տաճարը (ամենաբարձր շինությունը) եւ Էկվադորի դեսպանատունը:

Աղետի օջախի մոտակայքում՝ Վիրջինիայի նահանգում գործող ատոմային երկու ռեակտորները թեեւ չեն տուժել, բայց անջատվել են:

Երկրաշարժի էպիկենտրոնը Միներալ քաղաքից (Վիրջինիա) 6-9 կմ խորության մեջ էր, հաղորդում է ԱՄՆ երկրաբանական ծառայությունը: Նույն ծառայության տվյալներով, սա երկրի արեւելյան ափին տեղի ունեցած ամենաուժեղ երկրաշարժն է 1897-ից ի վեր, երբ սկսվեցին դիտարկումները: Սեյսմագետները նախազգուշացնում են, որ սորգեցյա ուժեղ ցնցումները կարող են կրկնվել, նշում է Ասոշիեյթեդ Պրես գործակալությունը:

Վաշինգտոնում ցնցումները տեւել են 30 վայրկյան: Գրասենյակային շենքերը ճոճվել են, բնակելիները՝ ցնցվել: Տարհանված մարդիկ մի քանի րոպեում լցրել են փողոցները:

Երկրաշարժից հետո որոշ ժամանակ բջջային կապի ցանցերը գործել են ընդհատումներով:

Մարդիկ տարհանվել են նաեւ Սպիտակ տնից: Արձակուրդում գտնվող նախագահ Օբամային շտաբ տեղեկացրել են երկրաշարժի մասին, որն զգացվել է հսկայական տարածքում՝ Բոստոնից մինչեւ Հարավային Կարոլինա (հարավում) եւ մինչեւ Դետրոյթ ու Ինդիանապոլիս (Միջին Արեւմուտքում):

Նյու Յորքի օդանավակայաններում թռիչքները մի քանի ժամով ընդհատվել են, Վաշինգտոնի մետրոյում եւ երկաթուղիներում գնացքների շարժման արագությունը սահմանափակվել է, որպեսզի հնարավոր լինի զննել ուղիները:

Պ. Ք.

Կանադա-Ռուսաստան. մրցակցություն հանուն Արկտիկայի

Կանադան զորավարժություններ է անցկացնում Ծայր Հյուսիսում, հասկացնելով իր հավակնությունները Հյուսիսարեւմտյան ուղու (որը Հյուսիսային սառուցյալ օվկիանոսով կմիավորի Եվրոպան եւ Ասիան) եւ Արկտիկայի բնական հարստությունների նկատմամբ: Դանիացի եւ ամերիկացի զինծառայողների հետ անցկացվող համատեղ Nanook զորավարժությունները սկսվել են օգոստոսի 5-ին, իսկ օգոստոսի 22-26-ը դրանց ներկա կլինի Կանադայի վարչապետ Սթիվեն Հարպերը, որը կհայտարարի կանադական Արկտիկայի զարգացմանն ուղղված տնտեսական նախաձեռնությունների մասին:

Գիտնականների գնահատումների համաձայն, մինչեւ 2030 թվականը Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում սառույցները կհալչեն, եւ ճանապարհ կբացվի դեպի Արկտիկայի հարստությունները: Բեւեռային շրջագծից այն կողմ ընկած են մեր մոլորակի գազի չմշակված պաշարների 30 տոկոսը եւ նավթի պաշարների 13 տոկոսը: Բացի դրանից, արկտիկական սառցե վահանը, որը դեռ վերջերս լիովին անթափանց էր թվում, կարող է իսպառ անհետանալ մինչեւ 2050 թվականը: Կանադան պահանջում է կանոնակարգ ստեղծել իր տարածային ջրերով անցնող երթուղով տեղաշարժվողների համար, գրում է «Լա Կրուա» թերթը:

Հատկանշական է, որ Կանադան ներկայիս զորավարժությունների մանրամասնությունները բացահայտեց հուլիսին՝ Մոսկվայի այն հայտարարությունից հետո, թե ՌԴ օդադեսանտային զորքերի երկու ստորաբաժանում կարող է Արկտիկայում տեղաբաշխվել ի թիվս այլ զորատեսակների, գրում է «Նեզավիսիմայա գազետա» թերթը:

Ռուսաստանը եւ Կանադան առայժմ հանդես են գալիս սիմետրիկ քայլերով: Ռուսաստանը մտադիր է ընդլայնել իր ծովային սահմանները: 2012-ին նա ՄԱԿ-ին խնդրագիր կներկայացնի իր ցամաքային ծանծաղուտի ընդլայնման վերաբերյալ: Կանադան իր հերթին համանման փաստաթղթեր կներկայացնի 2013-ին:

ՏՐԻՊՈԼԻ

Նատավայրը լքած Քադդաֆին դեռ մարտնչում է եւ կմնա Լիբիայում

Երբ ՆԱՏՕ-ի օդուժի հրթիռակոծությունն օգոստոսի 23-ի երեկոյան հողին հավասարեցրեց Տրիպոլիի Բաբ ալ Ազիզիա թաղամասը եւ կործանեց այնտեղ գտնվող Քադդաֆիի նստավայրը, Լիբիական հեղափոխության առաջնորդը ստիպված էր լքել նստավայրը եւ թողնել Տրիպոլին: Ապստամբները ներխուժեցին պալատական համալիր եւ մասնավորապես գլխատեցին Մուամմար Քադդաֆիի ոսկեձույլ արձանը, այրեցին շքեղ վրանը, որտեղ Քադդաֆին սովորաբար ընդունում էր պատվարժան հյուրերին:

Ապստամբների ներխուժման պահին գնդապետն այլեւս նստավայրում չէր: Ժամեր անց նա ելույթ ունեցավ տեղական ռադիոկայանի եթերում, հայտարարելով, թե Տրիպոլիից հեռանալը մարտավարական քայլ է:

Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ Քադդաֆիին հավատարիմ զորքերը ապստամբների դեմ մարտերը շարունակում են մայրաքաղաքից արեւմուտք եւ հարավ: Բանակը երեկ հարձակում է սկսել Աջելաթ քաղաքի վրա (Տրիպոլիից արեւմուտք): «Ալ Արաբիա» հեռուստաալիքի տվյալներով, գրոհների ընթացքում օգտագործվում են տանկեր եւ հրթիռակայանքներ: Մարտեր են մղվում նաեւ Սաբհա քաղաքի համար:

Ապստամբները երեկ տասնյակ «Գրադ» հրթիռներ են արձակել դեպի Տրիպոլի: Մասնավորապես թիրախ է դարձել Բաբ ալ Ազիզիայից ոչ հեռու գտնվող ալ Սուր ճանապարհը:

Լիբիական «Ալ Ուրուբա» ռադիոկայանին տված հարցազրույցում Քադդաֆիի ներկայացուցիչը խոստացել է Լիբիան դարձնել «հրաբուխ, լավա եւ բոց»: Ինքը՝ Քադդաֆին, նույն ռադիոկայանի հետ հեռախոսազրույցի ժամանակ ասել է, որ ինքը Լիբիայում է, իսկ նստավայրից եւ Տրիպոլիից հեռանալը մանեւր էր: Նրա խոսքերով, ինքը չէր կարող մնալ քաղաքի այն մասում, որի վրա ՆԱՏՕ-ի օդուժը 64 հրթիռ էր արձակել:

Քադդաֆիի գտնվելու վայրը ստույգ հայտնի չէ: Ռադիոկայանի եթերում նա հայտարարել է, որ ինքը երդվել է մարտնչել «մինչեւ մահ կամ հաղթանակ»:

Իշխանությունների ներկայացուցիչ Իբրահիմ Մուսան իր ռադիոելույթում հայտարարել է, որ կառավարությունը կարող է դիմադրությունը շարունակել ամիսներ կամ տարիներ:

Մուսայի խոսքերով՝ Քադդաֆիի բազմաթիվ կողմնակիցներ Տրիպոլի կգան ընդդիմությանը զինված հակահարված տալու: Քադդաֆիին հավատարիմ ցեղերի 12 հազար մարտիկներ պատրաստ են 2-3 օրում Տրիպոլիում իրենց ձեռքն առնել վերահսկողությունը:

Կալմիկիայի նախկին ղեկավար, FIDE-ի նախագահ Կիրսան Իլյումժինովը Քադդաֆիի հետ հեռախոսազրույցից հետո հայտարարել է, որ նա «ողջ-առողջ է», գտնվում է Տրիպոլիում եւ մտադիր չէ լքել Լիբիան:

Պ. Ք.

Չավեսն ազգայնացնում է ոսկու հանույթը

Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսը հրամանագիր է ստորագրել երկրում ոսկու արդյունահանումն ազգայնացնելու վերաբերյալ: Չավեսը հայտարարել է, որ տվյալ ձեռնարկումը կամրապնդի երկրի տնտեսությունը եւ թույլ չի տա վնաս պատճառել այն տարածքներին, որտեղ թանկարժեք մետաղն արդյունահանվում է բնության հանդեպ գիտատեսական եղանակներով:

Հրամանագրի հրապարակումից հետո կստեղծվեն ոսկու հանույթի համատեղ ձեռնարկություններ, որոնցում բաժնետոմսերի մեծամասնությունը կպատկանի պետությանը, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Ոսկու արդյունահանման մեծ մասն իրականացվում է Գուայանայի (երկրի հարավ) այսպես կոչված հանքային աղերի գոտում: Այդ մասին Չավեսն անցյալ շաբաթ հայտարարել էր մայրաքաղաքի զինվորական օկրուգի ստորաբաժանումներին ռուսական ռազմական տեխնիկայի հանձնման արարողության ժամանակ: Նա ասել էր, որ ներկայումս հիշյալ գոտում անհիշխանություն է, գործում են մասնաշենքերի ելուզակախմբեր: «Դա մեծ հարստություն է: Այնտեղ կան ոչ միայն ոսկու հանքաշերտեր, այլեւ բոքսիտներ, ալմասներ, երկաթի հանքաքար: Մենք կազգայնացնենք ոսկու հանույթը եւ այն կդարձնենք ռազմավարական պաշար: Ոսկին շարունակում է թանկանալ», ընդգծել էր նախագահը:

Պ. Ք.

Պոլիտկովսկայայի սպանության պատվիրատուն հայտնի է

Մոսկվացի քննիչները տեղեկություններ ունեն «Նովայա գազետա» թերթի լրագրողուհի Աննա Պոլիտկովսկայայի սպանության ենթադրյալ պատվիրատուի վերաբերյալ: Այդ մասին հաղորդվում է ՌԴ քննչական կոմիտեի կայքում:

Կասկածյալի անունը չի նշվում: Կոմիտեի հաղորդման մեջ ասվում է, որ «քննիչները վաղաժամ են համարում այդ տեղեկության հրապարակումը»:

Բացի դրանից, կոմիտեն հաստատել է ավելի վաղ ԶԼՄ-ներում հայտնված այն տեղեկությունը, թե սպանության ենթադրյալ կազմակերպիչը ձերբակալված է: Դա միլիցիայի նախկին փոխգնդապետ Դմիտրի Պավլյուչենկովն է, որ անցյալում դատարանում հանդես էր եկել որպես մեղադրող կողմի վկա:

Քննիչների վարկածի համաձայն, Մոսկվայի ՆԳԳՎ օպերատիվ-որոնողական վարչության չորրորդ բաժնի նախկին պետ Պավլյուչենկովը պատվեր է ստացել սպանելու Պոլիտկովսկայային: Պատվերի կատարման նպատակով նա ստեղծել էր հանցախումբ, որի մեջ մտնում էին երեք եղբայր Մահմուդովները եւ ուրիշ անձնք: Այնուհետեւ Պավլյուչենկովը իրեն ենթակա միլիցիոներներին հանձնարարել էր հետեւել Պոլիտկովսկայային: Ավելի ուշ նա զենք էր հայթայթել եւ դերաբաշխում կատարել հանցախմբի անդամների միջեւ: Սպանությունն անմիջականորեն հանձնարարվել էր Ռուսամ Մահմուդովին:

Պոլիտկովսկայային գնդակահարեցին 2006-ի հոկտեմբերի 7-ին: Սպանության գործով առաջին դատավարությունն ավարտվեց 2009-ի փետրվարի 19-ին: Երդվյալներն ամբաստանյալների մեղքը համարեցին չապացուցված եւ կայացրին արդարացման վճիռ: Նոր դատավարությունն սկսվեց 2009-ի օգոստոսի 5-ին, բայց գործը վերադարձվեց լրացուցիչ քննության... Սպանությունն անմիջականորեն իրականացրած լինելու կասկածանքով 2011-ի գարնանը ձերբակալվեց Ռուսամ Մահմուդովը:

ՌԱԴԻՈՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԼԵԶՈՒ

Ինչպես ենք մենք խոսում

Այլեւս հնարավոր չէ լռել: Մայրենի լեզվի հանդեպ եւս մեկ-երկու տասնյակ տարիների այսպիսի անտարբերություն, եւ մեր բանավոր խոսքը բոլորովին կդիմազրկի մայրենի լեզուն, կթուլացնի նրան, կդարձնի ժարգոնային մի լեզու, որն իր եռեւից կբերի անգրագիտություն եւ տգիտություն: Աղավաղված բանավոր խոսքը անմիջականորեն կարող է ազդել նաեւ գրավոր խոսքի վրա ու հատկապես ցածր դասարաններում սովորող երեխաների լեզվամտածողության վրա: Եթե երեխան իր շրջապատում՝ տանը, դպրոցում, փողոցում, ամենուրեք, անընդհատ լսի, օրինակ, **գթնել** կամ **քթնել** (խոսքը, անշուշտ, **գտնել** բառին է վերաբերում), կա կարմատավորվի նրա ուղեղում եւ վաղ թե ուշ այն կմտնի նրա գրավոր խոսքի մեջ: Եթե դա եզակի դեպք լիներ, կարելի էր այն կանխել ու ոչ մի ողբերգություն էլ տեղի չէր ունենա: Բայց նմանատիպ խեղաթյուրումների շարանը շատ երկար է, ախր...

Ահա, օրինակ, աղբյուր բառը: Երբ **աղբյուր** ես ասում, ասես զուլալ ջրի կարկաչն ես լսում: Մեր հանճարեղ լոռեցին՝ Հովհաննես Թումանյանը, «Անուշ» պոեմում գրում է.

- Էն ե՞րբ էր՝ Անուշն իր կուժը առավ,
Աղբյուրը գնաց ու հետ չդառավ...

Պատկերացրեք, եթե հանկարծ երեխան հազար անգամ լսած եւ ուղեղում արմատացած ձեւը թղթին հանձնի եւ գրի **ախփյուր**: Մի հրաշով կենդանանար Ամենայն Հայոց բանաստեղծը եւ տեսներ, որ իր իմացած զուլալ ու սառն **աղբյուրից** ոչ մի կարկաչ էլ չի լսվում: Այն ժամանակ ոչ մի աշակերտ եւ ուսուցիչ չէին պրծնի նրա բանաստեղծական ոչնչացնող ձաղկումից, ինչպես որ ամեն օր են (ու հատկապես հեռուստաթերում) այդ բառին ձաղկում բոլորը, մանավանդ հաղորդավարները, եւ ոչ մեկի մտքով էլ չի անցնում, որ դա իսկական անգրագիտություն է: Լեզվաբանական այդ ո՞ր օրենքով է **աղբյուր** գեղեցիկ ու հնչեղ բառը դարձել քաղքենիական տհաճ հնչողությամբ արտաբերվող **ախփյուր** կամ **ախպյուր** այլանդակված տառաբարանը...

Նույն այդ անհասկանալի օրենքով են արտաբերում նաեւ ոչ պակաս գեղեցիկ **վարագույր** բառը, որը դարձել է **վարաֆույր** եւ օրը մի քանի տասնյակ անգամ ոչ թե **վարագույր**, այլեւ ուղեղ է արդուկում հեռուստատեսության գովազդներում...

Անցած տարի, երբ թոռնիկս արդեն երեք տարեկան էր, իրար եռեւից մի քանի անգամ գովազդում լսելով այդ անհեթեթությունը, ասաց՝ «վարաֆույր..., վարաֆույր... չէ մի՝ վարաեղբայր...»:

Եթե անգամ երեք տարեկան փոքրիկն է հասկանում այս սխալը, ապա մի՞թե փորձառու հաղորդավարը չի հասկանում, որ ոչ բոլոր դեմքերում կարելի է «գ»-ն «ֆ» հնչեցնել... Իսկ եթե նա սիրված լիներ նույն այդ գովազդում օգտագործել շառագունել բառը, արդյո՞ք կշարժվեր իր իմացած այդ նույն օրենքով...

***

Եվս մի, ավելի քան արտառոց, օրինակ, որն ավելի հաճախ է հանդիպում մեր բանավոր խոսքում: Ահա, «**որպեսզի**» շաղկապը: Այն, ինչպես հայտնի է, իրար է կապում նախադասությունները, մտքերը: Բայց, ցավոք, ավելի շատ այն արտաբերում են այսպես՝ **որպիսի**: Այսինքն, շաղկապը դառնում է ածական: Չէ՞ որ «**որպիսի**»-ն ցույց է տալիս անձի, իրի, երեւույթի ինչպիսին լինելը: Մինչեւ ե՞րբ պետք է շարունակվի այս ակնհայտ սխալը: Գոնե հեռուստաթերը ձերբազատվի այս անգրագիտությունից...

Մայրենի լեզվի աղավաղումները շատ-շատ են: Ուղղակի անթիվ, անհամար են դրանք: Բայց ես եւս մի քանի օրինակ եմ ուզում բերել ու հոդվածը թողնել շարունակելի: Լրագրի բոլոր էջերն էլ չեն հերիքի, որպեսզի սպառեմ ասելիքս...

Այդ օրինակներից նշեմ, ասենք, **թատրոն** բառը: Ո՞ր օրենքով է այն արտաբերվում այսպես՝ **թաթրոն**, **թաթերական**: Մի՞թե դա գեղեցկացնում է խոսքը: Կամ՝ **Թադեւոս** անձնանունը: Ինչո՞ւ է այն դարձվում **Թաթեւոս**: Հեռու չգնանք. մեր շատ սիրելի «Շանթ» հեռուստատեսության հարգարժան հաղորդավարուհիներ Դիանան եւ Լիանան մշտապես ասում են՝ «Այժմ լսենք մարզական մեկնաբան Վարդան **Թաթեւոսյանին**»: Իսկ ինչո՞ւ ոչ՝ **Թադեւոսյանին**...

Կամ՝ **գդալ** բառը: Ինչո՞վ է այն վատ հնչում, երբ ասում ենք՝ **գդա՛լ**: Մի՞թե խոսքը գեղեցկանում է, երբ ասվում է՝ **գթալ** կամ **քթալ**: Գթալը խղճալ բառն է, **քթալը** չգիտես, թե ինչ է...

Կամ, ինչո՞ւ՝ **ախտ** եւ ոչ թե՝ **աղբ**, ինչո՞ւ՝ **եխտայր** եւ ոչ թե՝ **եղբայր**, ինչո՞ւ՝ **արցան** եւ ոչ թե՝ **արձան**, ինչո՞ւ՝ **քցել** ու ոչ թե՝ **գցել**, ինչո՞ւ՝ **փխծկալ** եւ ոչ թե՝ **փղձկալ**, ինչո՞ւ՝ **մածյան** եւ ոչ թե՝ **մաշյան** (այս, վերջինիս, առիթով հայտնի լեզվաբան, պրոֆեսոր Գուրգեն Սեւակն ասում էր՝ «կոնֆետային լեզու»), այսինքն, քաղցրացնում են լեզուն, խոսքը...

Շարունակենք մեր նմանատիպ օրինակները. ինչո՞ւ՝ **ոխտ** եւ ոչ թե՝ **ողբ**, ինչո՞ւ՝ **սուրփ** եւ ոչ թե՝ **սուրբ**, ինչո՞ւ՝ **փրթուչ** եւ ոչ թե՝ **բրդուճ**, ինչո՞ւ՝ **փորցանք** եւ ոչ թե՝ **փորձանք**, ինչո՞ւ՝ **հիվանդուցյուն** եւ ոչ թե՝ **հիվանդություն**...

Հիվանդություն է հենց այս խոսելաձեւը, այս խոսելաոճը: Հիվանդություն է խոսքի ու լեզվի այս ջարդը, մայրենիի այս աղավաղումը, որ տեղի է ունենում ամեն պահի եւ ամենուր: Չէ՞ որ այս ամենը իսկապես անդադարձ է գրավոր խոսքի վրա: Եվ խոսքի ու լեզվի այս պաճուճանքը, այս գունազարդումը հատկապես հեռուստատեսության եթերում, իր ազդեցությունն է թողնում առաջին հերթին դպրոցական հասակի երեխաների վրա: Ահա թե ինչու նրանց գրավոր աշխատանքներում այդքան շատ են հանդիպում տառասխալներ...

Այս կարեւորագույն հարցը պետք է մտահոգի բոլորիս եւ առաջին հերթին մայրենի լեզվին առնչվող մարդկանց: Եկեք տեր կանգնենք մեր ամենաթանկ գանձին եւ ամենահզոր զենքին՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻՆ: Տեր կանգնենք ազգովի՛, մեծ ու փոքր... Բոլո՛ր ս...

ՄԱՐՏԻՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՀ ժուռնալիստների միության անդամ

Ամառը եզրափակվում է «Ամառային ջազ» համերգներով

Բացօթյա ջազ համերգները, արդեն մի քանի տարի, դարձել են մեր երիտասարդության շրջանում սպասված ու սիրված: Այդ ավանդույթը սկիզբ առավ երեւանյան «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի շրջանակներում ու դարձավ հրաշալի ժամանցի ու ջազային երաժշտության վայելքի հնարավորություն: Եթե ջազ երաժշտությունը երեք տարի շարունակ հնչեցվում էր Ազնավուրի անվան հրապարակում, այժմ Երեւանի քաղաքապետարանի հետ համատեղ «Ամառային ջազ» համերգների կազմակերպիչ, «Վիբրոգրաֆուս» ընկերության տնօրեն **Վարդան Գրիգորյանը** տեղեկացրեց, որ երեք օր շարունակ, Ազատության հրապարակում երեկոյան 19-ից մինչեւ ուշ գիշեր կինչի կենդանի ջազային երաժշտություն: «Մենք ուզում ենք, որ Երեւանը դառնա երաժշտական քաղաք, դառնա փառատոնային քաղաք ու աշխարհի տարբեր երկրներից տարբեր խմբեր գան եւ մեր հանրությանը ներկայացնեն իրենց կատարումները», ասաց պրն Գրիգորյանը:

Եռօրյա բացօթյա ջազ համերգներին հրավիրվել են խմբեր Դանիայից, Գերմանիայից, Իտալիայից, Վրաստանից եւ այլն: Իսկ Հայաստանից՝ «Դոգմա», «Բամբիռ», «Օխսեն հեմ», «Վոխս» եւ ուրիշներ: Հետաքրքրական է, որ համերգներին մասնակցելու ցանկություն է հայտնել իրանամերիկյան «Արմանդան» քոնսերտը: Մի խոսքով՝ 12 քոնսերտ, ջազ խմբեր օգոստոսի 26-ին, 27-ին, 28-ին, անվճար համերգներով հանդես կգան կենդանի հնչողությամբ:

Տարօրինակ էր, որ «Ուրբաթ» ակումբի կազմակերպած ասուլիսին պրն Վարդան Գրիգորյանը հրաժարվեց ակումբում ասուլիս տալուց եւ գերադասեց ակումբի մուտքը, պատճառաբանելով, որ իրենց համերգների հովանավորը եւ «Ուրբաթ» ակումբի հովանավորը մրցակիցներ են:

Մ. Մ.

Երեւանում նշվեց «Ալիք» օրաթերթի 80-ամյակը

ՀՀ սփյուռքի նախարարությունը նախաձեռնել է եւ անցկացնում է «Սփյուռքյան համայնքների օրեր Հայաստանում» ծրագիրը: Այդ ծրագրի անդրանիկ միջոցառումների շարքը նվիրված է Իրանի հայկական համայնքին: Ծրագրի նպատակն է հայաստանյան հասարակությանն ավելի ճանաչելի դարձնել մեր սփյուռքյան հայկական համայնքները, ակտիվացնել շփումները տարբեր բնագավառներում:

«Հայաստանում Իրանի համայնքի օրեր» միջոցառումների շարքը նախորդ օրը մեկնարկեց Երեւանի Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տանը կազմակերպված «Ալիք» օրաթերթի 80-ամյա հոբելյանական երեկոյով: Իրանում գործող միակ օրաթերթի հոբելյանի առիթով իր շնորհավորական խոսքն էր հղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Միջոցառմանը ներկա էին Հայաստանում հավատարմագրված դեսպաններ, պետական այրեր, մտավորականներ, հյուրեր: Ներկաներին ողջունեց եւ «Ալիք» օրաթերթին ու նրա խմբագրակազմին շնորհավորեց նախարար **Հրանուշ Հակոբյանը** եւ նախարարության պատվոգրով պարգեւատրեց «Ալիք» օրաթերթի արտոնատեր Ալբերտ Աճեմյանին: Իսկ ներկայիս խմբագրապետ Դերենիկ Մելիքյանը «սփյուռքում հայ մշակույթի տարածմանը նպաստող գործունեության, Հայաստան-Սփյուռք գործակցության եւ կապերի ամրապնդման գործում ունեցած նշանակալի ավանդի, Իրանի հայ համայնքի բարգավաճման եւ «Ալիք» օրաթերթի հոբելյանի կապակցությամբ», արժանացավ նախարարության «Վիլյամ Սարոյան» մեդալին:

Հանդիսության ընթացքում ելույթներ ունեցան եւ թերթի անցած ուղու մասին մանրամասներ պատմեցին «Ալիքի» արտոնատեր **Ալբերտ Աճեմյանը**, նախկին խմբագիրներ **Էդվարդ Երիցյանը**, **Սեդա Դավթյանը** եւ **Նորայր Էլսայանը**: Ազգանվեր գործունեության համար հոբելյարներին շնորհավորեցին Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն **Տիգրան Զարգարյանը**, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար, ԻԻՀ-ում ՀՀ-ի նախկին դեսպան **Գեղամ Ղարիբջանյանը**, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր **Էդիկ Մինասյանը**, ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան **Նաղաշ Մարտիրոսյանը**: Երեկոյի ընթացքում ընթերցվեցին նաեւ «Ժառանգություն» կուսակցության նախագահ **Ռաֆֆի Հովհաննիսյանի** եւ ՀՅԴ «Դրօշակ» պաշտոնաթերթի գլխ. խմբագիր **Ռուբեն Հովսեփյանի** ողջույնի ու շնորհավորական ուղերձները:

«Ալիք» օրաթերթի խմբագիր **Դերենիկ Մելիքյանը** խմբագրակազմի անունից շնորհակալություն հայտնեց սփյուռքի նախարարությանը, թերթի հոբելյանը մայր հայրենիքում մեծ շուքով նշելու համար եւ նախարար Հրանուշ Հակոբյանին հանձնեց օրաթերթի շնորհակալագիրը: Հանդիսությունն ավարտվեց մշակութային մասով:

Երեկ, «**Ազգը**» հյուրընկալեց պրն Դերենիկ Մելիքյանին, շնորհավորեց սփյուռքի նախարարության բարձրագույն պարգեւին արժանանալու եւ օրաթերթի 80-ամյակի կապակցությամբ ու զրուցեց մի շարք հարցերի շուրջը: Պրն. Մելիքյանն ասաց, որ Հայաստանի անկախության 20-ամյա տարեդարձը համընկավ «Ալիքի» 80-ամյա հոբելյանի հետ: «Վերջապես իրականացավ մեր թերթի երազանքը՝ մայր հայրենիքում նշել հոբելյանը: «Ալիքի» հիմնադրման օրվանից, ընթացքը մշտապես եղել է կայուն, հիմնական նպատակը՝ ազգային արժեքներին հավատարիմ»:

Սկզբնական շրջանում «Ալիքը» եղել է շաբաթաթերթ, հետագայում եռօրյա, իսկ 1941-ից առ այսօր օրաթերթ՝ 3000-3500 տպաքանակով: Օրաթերթը տասնամյակներ շարունակ, որպես սփյուռքի օրաթերթ, առավելում է 40 հայկական գաղութներ, համայնքներ: Հայաստանի անկախության հռչակումից հետո «Ալիքը» առավել է նաեւ Հայաստան, Արցախ եւ Ջավախք: Այժմ օրաթերթը ինտերնետով տարածվում է ու թերթի 8 հոգանոց անձնակազմը համալրվում է աշխարհի տարբեր երկրներից թղթակիցներով, որոնք անհատույց հոդվածներ են գրում տարբեր բնագավառներից: Ինչպես նշում էր պրն. Մելիքյանը, օրաթերթի 8 էջերում զետեղվում են ոչ միայն իրանական համայնքին վերաբերող նյութեր, այլ նաեւ աշխարհաքաղաքական իրավիճակի ու նաեւ Հայաստանից ստացված բոլոր բնագավառներից լուրեր, նյութեր: «Ցնայած, որ «Ալիքը» Իրանի ՀՅԴ-ի շրջանի օրգանն է, նշեց խմբագիրը, բայց քաղաքականացված չէ, զուտ կուսակցության պաստաղ չի կատարում: Թերթի էջերում բազմազան նյութեր են զետեղվում բոլոր միությունների, գաղթօջախների, մարզամշակութային միությունների մասին»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հայինկասացիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից ավտոպահեստամասեր ձեռք բերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց մրցույթի կազմակերպման մասին

«Հայինկասացիա» փակ բաժնետիրական ընկերությունը հայտարարում է բաց մրցույթ՝ «Հայինկասացիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից ավտոպահեստամասեր (ըստ «Հայինկասացիա» ՓԲԸ-ի կողմից օգտագործվող տրանսպորտային միջոցների ցանկի կամ դրա մի մասի՝ցանկը տրված է հրապարակային ծանուցման հավելվածով) ձեռք բերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել այն անձիք (այսուհետ՝ Մասնակից), որոնք ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական որակավորում, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ, նյութական եւ աշխատանքային ռեսուրսներ: Բաց մրցույթում հաղթող կարող են ճանաչվել մեկից ավելի մասնակիցներ, որոնց հետ հետագայում կարող են կնքվել առանձին պայմանագրեր:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել «Հայինկասացիա» ՓԲԸ ք.Երեւան, Դ.Անհաղթի 3 հասցեում:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետը՝ **2011թ. հոկտեմբերի 1-ին, ժամը 17:00-ն:**

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամը՝ **2011թ. հոկտեմբերի 5-ին, ժամը 14:00**-ն՝ ՀՀ կենտրոնական բանկ,ք.Երեւան,Վ.Սարգսյան 6 հասցեում:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է **2011թ. հոկտեմբերի 10-ին, ժամը 14:00-ին՝** ՀՀ կենտրոնական բանկ,ք.Երեւան,Վ.Սարգսյան 6 հասցեում:

Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը հրապարակված է **www.cba.am** ինտերնետային կայքում: Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «Հայինկասացիա» ՓԲԸ, գործերի կառավարչություն հեռ. 28-15-00, 20-14-26, 28-51-03, իրավական հարցերով հեռ. 28-51-82:

Բրոնզե մեդալ Ուկրաինայի հավաքականի կազմում



Հունգարիայում մեկնարկել է ըմբշամարտի աշխարհի պատանեկան առաջնությունը կրտսեր տարիքի պատանիների մասնակցությամբ: Առաջինը մրցասպարեզը տրամադրվել է ազատձգային ըմբիշներին: Մրցումների առաջին օրը աշխարհի չեմպիոնի տիտղոսը վիճարկվեց քաշային 5 կարգերում: Դրանցից 4-ում հանդես եկան Հայաստանի ներկայացուցիչները, որոնց ելույթն անհաջող էր:

Առավել հաջող էր մինչեւ 50 կգ քաշային Նարեկ Բաբայանի ելույթը: Նա առաջին գոտեմարտում հաղթեց մոնղոլ Ունիրբաթ Բյամբասսոգտին: Քառորդ եզրափակիչում հայ ըմբիշը պարտվեց իրանցի Հասան Յազդանիխարատիին: Վերջինս հասավ մինչեւ եզրափակիչ, ուստի Նարեկն իրավունք ստացավ պայքարելու բրոնզե մեդալի համար: Այդ պայքարում նա հաջող անցկացրեց առաջին գոտեմարտը՝ հաղթելով հունգարացի Բենցե Բալատոնիին: Սակայն վճռորոշ գոտեմարտում հայ ըմբիշը պարտվեց ճապոնացի Ռինուա Նակամուրային ու մրցակցին զիջեց բրոնզե մեդալը: Քաշային այս կարգում չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Հաջիմուրադ Ռաշիդովը:

Մեր մյուս երեք ըմբիշներն անհաջողության մատնվեցին առաջին իսկ գոտեմարտում: Մինչեւ 42 կգ քաշային կարգում Վահե Մասինյանը պարտվեց ադրբեջանցի Վուղուն Ալիեւին, իսկ Անանիա Հակոբյանը (69 կգ) զիջեց Ուկրաինան ներկայացնող Ռուսամ Զաֆարյանին: Վերջինս հաջող ելույթ ունեցավ: Հաղթելով նաեւ ուզբեկ Իսլոմիդին Ռահիմովին, քառորդ եզրափակիչում Ռուսամը պարտվեց հնդիկ Կումար Դինեշին, որը հասավ մինչեւ եզրափակիչ՝ զիջելով ռուսաստանցի Մահոմեդիաջի Իմանաբաթիեւին: Իսկ հայ ըմբիշն իրավունք ստացավ մասնակցելու բրոնզե մեդալի համար մղվող պայքարին: Այն հաջողությամբ ավարտվեց: Հաղթելով հունգարացի Նոե Սաբոյին եւ ադրբեջանցի Էլմար Իսմայիլովին, Ռուսամ Զաֆարյանը դարձավ բրոնզե մեդալակիր:

Մինչեւ 58 կգ քաշայինների մրցավեճում Դավիթ Շեկոյանը առաջին գոտեմարտում զիջեց մոլդովացի Տոմա Վասկանին ու դուրս մնաց հետագա պայքարից:

Էսթ'Օ-ն կդառնա ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստը

Մախաչկալայի «Անժին» պաշտոնապես հայտարարել է կամերունցի Էսթ'Օ-ին գնելու մասին: Երեկ ֆուտբոլիստը պետք է բժշկական հետազոտության ենթարկվեր, որից հետո ակումբի հետ եռամյա պայմանագիր կնքեր: Այսօր Էսթ'Օ-ն պետք է միանա «Անժիի» իր նոր խաղընկերներին եւ նրանց հետ նախապատրաստվի Ռուսաստանում տեղի համանուն թիմի հետ շաբաթ օրը կայանալիք առաջնության հանդիպմանը:

Ակումբը չի հրապարակել Էսթ'Օ-ի տրանսֆերի մանրամասները: Իսկ ահա իտալական Gazetta dello Sport-ի տեղեկացմամբ Էսթ'Օ-ի տեղափոխության համար «Անժին» «Ինտերին» 25 մլն եվրո է վճարել, իսկ Էսթ'Օ-ի տարեկան աշխատավարձը կազմելու է 20,5 մլն: Այսպիսով, Էսթ'Օ-ն կդառնա ֆուտբոլի պատմության մեջ ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստը:

Ամռան տրանսֆերային շրջանում Էսթ'Օ-ն «Անժիի» արդեն 3-րդ խոշոր ձեռքբերումն է: Մինչ այդ թիմ էին հրավիրվել հունգարացի Բալաժ Զուջակը եւ ՌԴ հավաքականի կիսապաշտպան Յուրի Ժիրկովը: Իհարկե, մեծ գումարներ վաստակելու հնարավորությունն էր պատճառը, որ կամերունցի ֆուտբոլիստը համաձայնեց «Ինտերից» տեղափոխվել «Անժի» ու հրաժարվել չեմպիոնների լիգայի մրցաշարի մասնակցությունից: Չէ՞ որ «Անժին» լավագույն դեպքում միայն հաջորդ տարի կարող է մասնակցել եվրոգավաթների խաղարկությանը:

30-ամյա Էսթ'Օ-ն ֆուտբոլային հարուստ կենսագրություն ունի, մի շարք տիտղոսների է արժանացել: 17 տարեկանում նա հայտնվեց Մադրիդի «Ռեալում» եւ մասնակցեց 1998-ին Ֆրանսիայում կայացած ֆուտբոլի աշխարհի առաջնության Կամերուն-Իտալիա հանդիպմանը՝ դառնալով ամենաերիտասարդ մասնակիցը: 2002-ի աշխարհի առաջնությունում նա արդեն Կամերունի հավաքականի առաջատարն էր եւ դարձավ Սաուդյան Արաբիայի ընտրանու դարպասը խփած հաղթական գոլի հեղինակը:

Ճիշտ է, Մադրիդի «Ռեալում» Էսթ'Օ-ին խաղալ այդպես էլ չհաջողվեց, փոխարենը նա իրեն դրսեւորեց իսպանական մեկ այլ ակումբում՝ «Մալյորկայում»: 2004-ին Էսթ'Օ-ն տեղափոխվեց «Բարսելոն»: Կատալոնական ակումբում անցկացրած 5 մրցաշրջանների ընթացքում նա 13 գոլ խփեց, դարձավ Իսպանիայի եռակի չեմպիոն, 2 անգամ նվաճեց չեմպիոնների գավաթը: Երկու տարի առաջ նա տեղափոխվեց «Ինտեր»: Առաջին մրցաշրջանը հաջող էր Էսթ'Օ-ի համար: Ժոզե Մոուրինյոի գլխավորությամբ «Ինտերը» դարձավ Իտալիայի չեմպիոն եւ չեմպիոնների գավաթակիր: Անցած մրցաշրջանում Էսթ'Օ-ն պաշտոնական մրցումներում 37 գոլ խփեց:

«Բավարիան» կրկին խմբային մրցաշարում է

Մյունխենի «Բավարիան», Զագրեբի «Դինամոն», իսպանական «Վիլյառեալը», բելգիական «Գենկը» եւ Կիպրոսի «Ապոելը» իրավունք ստացան հանդես գալու ֆուտբոլի չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում: Դա հայտնի դարձավ որակավորման 4-րդ փուլի պատասխան հանդիպումներից հետո:

«Բավարիան» դեռեւս առաջին խաղում սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթելով «Բազելին», հաջորդ փուլի ուղեգիր լուրջ հայտ էր ներկայացրել: Հյուրընկալվելիս էլ մյունխենցիները հաղթեցին: 7-րդ րոպեին Գոմեսի խփած միակ գոլը վերջնականապես լուծեց մրցակցության ելքը:

Թեեւ Շվեդիայի չեմպիոն «Մալմյոն» պատասխան խաղում սեփական հարկի տակ 2-0 հաշվով ռեւանշի հասավ Զագրեբի «Դինամոյի» նկատմամբ, սակայն դա բավարար չէր ընդհանուր հաղթանակի համար, քանի որ առաջին մրցախաղում պարտվել էր խոշոր՝ 1-4 հաշվով: Իսկ ահա Կիպրոսի «Ապոելի» հաղթանակը լեհական «Վիսլայի» նկատմամբ (3-1) թիմին ուղեգիր պարգեւեց: Առաջին խաղում «Ապոելը» պարտվել էր 0-1 հաշվով: Ընդ որում վճռորոշ՝ 3-րդ գոլը «Ապոելը» խփեց խաղավերջում: Աչքի ընկավ Այլսոնը, որն այդ խաղում 2 գոլ խփեց: Բելգիական «Գենկի» եւ Հայֆայի «Մաքաբիի» մրցավեճի ելքը վճռեցին հեռխաղյա 11 մ հարվածները: «Գենկը» սեփական հարկի տակ հաղթեց նույնքիսի 2-1 հաշվով, ինչպիսի արդյունքով որ զիջել էր հյուրընկալվելիս: 11 մ հարվածներն ավելի հաջող իրացրին բելգիացիները, որոնք էլ հանդես կգան խմբային մրցաշարում:

Իսպանական «Վիլյառեալը» սեփական հարկի տակ համոզիչ ռեւանշի հասավ դանիական «Օդենսեի» նկատմամբ առաջին խաղում կրած պարտության (0-1) դիմաց: Գլխավոր իրադարձությունները ծավալվեցին 2-րդ խաղակեսում: 2 անգամ աչքի ընկավ Ռոսին, մեկ գոլ էլ խփեց Մարենան:

5 մլն եվրո Ֆոռլանի համար

Այն բանից հետո, երբ «Ինտերի» կամերունցի հարձակվող Սամուել Էսթ'Օ-ն տեղափոխվեց «Անժի», իտալական ակումբը իսպանական «Ատլետիկոյի» հետ համաձայնեցրել է ուրուգվայցի հարձակվող Դիեգո Ֆոռլանի տրանսֆերի հարցը: Ըստ Gazzetta dello Sport-ի, տրանսֆերի արժեքը 5 մլն եվրո է: Մոտ օրերս միլանյան ակումբի ներկայացուցիչները կհանդիպեն Ֆոռլանի գործակալի հետ, որպեսզի ֆնարկեն ֆուտբոլիստի անձնական պայմանագրի հետ կապված հարցերը: Նախատեսվում է Ֆոռլանի հետ երկամյա պայմանագիր կնքել:

ՖԻՖԱ-Ի ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Նահանջ մեկ հորիզոնականով

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում մեկ հորիզոնականով նահանջել է եւ զբաղեցնում է 71-րդ տեղը: Ընտրական մրցաշարում մեր հավաքականի առաջիկա մրցակիցներ Անդորրայի ընտրանին 203-րդ տեղում է, իսկ Սլովակիան զբաղեցնում է 27-րդ հորիզոնականը: Սլովակները 3 տեղով առաջադիմել են:

Եվրո-2012-ի ընտրական մրցաշարում ՀՀ հավաքականի մրցակիցներից ամենաբարձր վարկանիշն ունեն ռուսները, որոնք 5 հորիզոնականով բարձրացել են ու զբաղեցնում են 13-րդ տեղը: Իռլանդիայի հավաքականը եւս առաջադիմել է՝ 33-րդ տեղից տեղափոխվելով 31-րդ հորիզոնական: 6 տեղով առաջադիմել են նաեւ մակեդոնացիները, որոնք այժմ 90-րդ հորիզոնականն են զբաղեցնում: Ստացվում է, որ միայն Հայաստանի հավաքականն է վատթարացրել իր ցուցանիշը:

ՖԻՖԱ-ի դասակարգման նոր ցուցակը գլխավորում է աշխարհի փոխչեմպիոն Հոլանդիայի ընտրանին, որին հաջողվեց վերջապես շրջանցել երկար ժամանակ առաջատարների դիրքը պահպանած իսպանացիներին: 3-րդ հորիզոնականում իր տեղը պահպանել է Գերմանիայի հավաքականը: 4-րդ տեղում 2 հորիզոնականով բարձրացած անգլիացիներն են, որոնք շրջանցել են Ուրուգվայի եւ Բրազիլիայի հավաքականներին: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Իտալիայի, Պորտուգալիայի, Արգենտինայի եւ Խորվաթիայի հավաքականները:

Տիգրան Պետրոսյանի անվան ակումբ Ֆրանսիայում

Armchess.am-ի տեղեկացմամբ Փարիզում բացվել է Տիգրան Պետրոսյանի անվան ակումբ, որը նախատեսում է կազմակերպել շախմատային տարբեր միջոցառումներ: Նախատեսվում է, որ ակումբի շախմատային թիմը հանդես կգա Ֆրանսիայի թիմային առաջնությունում:

Տիգրան Պետրոսյանի անվան ակումբի նախագահն է Ֆրանկ-Վազգեն Բայրամյանը (Ֆրանսիա), պատվավոր նախագահը՝ շախմատի միջազգային կազմակերպիչ Գագիկ Հովհաննիսյանը (Հայաստան), քարտուղարը՝ Հելեն Բայրամյանը (Ֆրանսիա):

Հայ ձյուդոյիստները ձախողվեցին

Փարիզում ընթացող ձյուդոյի աշխարհի մեծահասակների առաջնությունում անհաջող հանդես եկան հայ ձյուդոյիստները՝ չկարողանալով մրցանակակիր դառնալ:

Տղամարդկանց մրցաշարի մեր երկու մասնակիցներն էլ մնացին ձեռնունայն: Ճիշտ է, Հովհաննես Դավթյանը մինչեւ 60 կգ քաշայինների մրցավեճում իրավունք էր ստացել պայքարելու բրոնզե մեդալի համար, սակայն այն նվաճել չհաջողվեց: Դավթյանը մրցաշարը սկսեց ղազախստանցի Ելդոս Սմետովի նկատմամբ տոնած հաղթանակով: Այնուհետեւ նա պայքարից դուրս մղեց Ջիբուտիի ներկայացուցիչ Հումեդ Մուխտարին եւ չինացի Լիուան Յանգին: 1/8 եզրափակիչում հայ ձյուդոյիստի մրցակիցը ռուսաստանցի Բեսլան Մուդրանովն էր: Այդ գոտեմարտում էլ Դավթյանը տաստմիից հեռացավ հաղթանակած: Քառորդ եզրափակիչում նա հանդիպեց ճապոնացի Հիրոակի Հիրաոկայի հետ: Այս անգամ Հովհաննեսին չհաջողվեց առավելության հասնել մրցակցի նկատմամբ: Սակայն քանի որ ճապոնացին հասավ մինչեւ եզրափակիչ, որտեղ պարտվեց ուզբեկ Ռիշոդ Սոբիրովին, ուստի Դավթյանն իրավունք ստացավ մասնակցելու բրոնզե մեդալների համար մրցավեճին:

Առաջին գոտեմարտում նա պարտվեց Ուկրաինան ներկայացնող Գեորգի Զանտարաիային ու զրկվեց մեդալից: Հետաքրքրական է, որ բրոնզե մեդալի համար պայքարում էր նաեւ Ռուսաստանը ներկայացնող Արսեն Գալստյանը: Սակայն նա էլ անհաջողության մատնվեց՝ զիջելով ադրբեջանցի Իլգար Մուշկիեւին:

Հայաստանի մյուս ներկայացուցիչը՝ 2005-ի Եվրոպայի չեմպիոն Արմեն Նազարյանն առաջին գոտեմարտում՝ հաղթելով ռումինացի Դան Ֆասիեյին, հաջորդում պարտվեց բրազիլացի Լեանդրո Չունային ու դուրս մնաց հետագա պայքարից:

Կանանց մրցապայքարում Գայանե Հարությունյանը (48 կգ) պարտվեց հունգարացի Եվա Չեռնովիցկուն: Հայաստանի դրոշի ներքո հանդես եկած Ժաննա Ստանկեւիչն էլ մինչեւ 57 կգ քաշայինների մրցավեճում պարտվեց Հունաստանը ներկայացնող Զուլիետա Բուկովալային:

Հաղթեց միայն Կորյուն Սողոմոնյանը

Դուբլինում ընթացող բռնցքամարտի Եվրոպայի պատանեկան առաջնության երկրորդ օրն անհաջող դասավորվեց հայ բռնցքամարտիկների համար: Ռինգ դուրս եկած 5 բռնցքամարտիկներից 4-ը պարտություն կրեցին եւ ավարտեցին ելույթները: Հաջող հանդես եկավ միայն պատանիների աշխարհի չեմպիոն Կորյուն Սողոմոնյանը: Մինչեւ 49 կգ քաշային կարգում Սողոմոնյանը 14-4 հաշվով հաղթեց մոլդովացի Դմիտրի Սուհոդոլին:

Պայքարից դուրս մնաց Արսեն Հայրապետյանը (64 կգ), որը 12-14 հաշվով զիջեց բելառուս Նիկիտա Շաբելնիկին: Նրա օրինակին հետեւեց նաեւ 91 կգ քաշային Ռաֆայել Սիմոնյանը՝ 14-17 հաշվով պարտվելով ռումինացի Միրել Յիտարուին: Իր թիմակիցների ճակատագիրը կիսեց նաեւ Արթուր Ներսիսյանն ադրբեջանցի Թուրալ Ահմադովի հետ մենամարտում (11-16): Ավելի վաս հանդես եկավ գերծանրքաշային Վախթանգ Մկրտչյանը, որն արդեն 1-ին ռաունդում ռինգը թողեց պարտված թուրք Մուհամադ Ասիի հետ մրցավեճում:

Այսպիսով, պատանեկան առաջնությունում ռինգ դուրս եկած 9 հայ բռնցքամարտիկներից 5-ն արդեն թողել են ասպարեզը: Մրցումների 3-րդ օրը Հայաստանից ռինգ դուրս կգան 4 բռնցքամարտիկներ: Իր առաջին մենամարտը կանցկացնի Անդրանիկ Խաչատրյանը (81 կգ)՝ մրցելով ռուսաստանցի Վլադիմիր Կոռսունովի հետ: Մյուս 3 բռնցքամարտիկները կանցկացնեն 2-րդ մենամարտերը: Կոլյա Գրիգորյանը (56 կգ) կմրցի շոտլանդացի Մարկ Մաքեովինի հետ, Գոռ Երիցյանի (60 կգ) մրցակիցը կլինի ֆինն Հենրիկ Էնբոսը, իսկ Արայիկ Հարությունյանը (69 կգ) կմենամարտի ադրբեջանցի Ֆագա Հուսեյնովի հետ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀՀ ԱՄՆ Դեսպանատունը մրցույթի է հրավիրում

Ինտերնետային ծառայություններ մատուցող ընկերություններին:
Մրցույթային փաթեթները կարող են ձեռք բերել Ամերիկյան 1 հասցեում,
ԱՄՆ Դեսպանատան կենտրոնական մուտքից,
օգոստոսի 25-ից մինչեւ սեպտեմբերի 8-ը, ժամը 9:00 – 18:00-ն:

Ռիելտոր «Ֆլորես» Ածուռդի Տուն ՍՊԸ-ն «ԱՌԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում եւ վերջինիս միջոցով իրականացնելու է «ԱՌԵԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գույքի ածուռդային վաճառք հրադարակային սակարկությունների՝

- Բնակարան, ընդ. մակերեսը՝ 63.8 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Վարդանանց փող., 28 շենք, 93 բն.: Մեկն. գինը՝ 23000000 ՀՀ դրամ:
- Բնակարան, ընդ. մակերեսը՝ 54.0 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Նոր Արեշ 15 փող. շենք 5, բնակարան 32: Մեկն. գինը՝ 12400000 ՀՀ դրամ:
- Բնակելի տուն, ընդ. մակերեսը՝ 160.1 քմ, հարակից շինություններ՝ 40.2 քմ, հողամաս՝ 0.07651 հա: Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Վերին Արտաշատ: Մեկն. գինը՝ 15300000 ՀՀ դրամ:

Ածուռդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցեում, 26.09.2011թ-ից մինչեւ 30.12.2011թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուր. օր ժամը 11.00-ից – 20.00-ն: Ածուռդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնման առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկություններ, այդ թվում՝ ածուռդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել www.borsa.am :

Հրապարակային ծանուցում

մրցույթի անցկացման մասին /ծածկագիր 1118-Ա/

Ի կատարումն ՀՀ կառավարության 2011թ.–ի օգոստոսի 4-ի թիվ 1118-Ա որոշման 3-րդ կետի՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը (այսուհետ՝ վարչություն) հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու վարչության տնօրինության՝ Ախուրյանի անավարտ կոլեկտորի (այսուհետ՝ գույք) օտարման մրցույթին (ծածկագիր 1118-Ա):

1. Տեղեկություններ օտարվող գույքի մասին

1.	Գույքի հասցեն	ՀՀ Շիրակի մարզ, գ. Ախուրյան
2.	Գույքի օտարման մասին ՀՀ կառավարության որոշման համարը, ամսաթիվը	1118-Ա, 04.08.2011թ
3.	Գույքի հաշվեկշռային արժեքը՝ (դրամ)	241953000

2. Մրցույթին մասնակցելու պայմանները

2.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը (տես 5.1 եւ 5.2 կետերը) եւ 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցույթի մասնակցության հայտը (ձեւը կցվում է), որը ներառում է հետեւյալ փաստաթղթերը՝

- *գրավոր առաջարկ մրցույթի պայմանների վերաբերյալ (տե՛ս 3.12 կետը),*
- *նախավճարի մուծումը հաստատող փաստաթղթերի պատճենները,*
- *գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները (իրավաբանական անձանց համար), հաղորդիչների համար՝ անձնագրի եւ սոցիալական քարտի պատճենները,*
- *հայտատուի կողմից տրված լիազորագիր (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը),*
- *գործարար ծրագիր,*
- *իրավաբանական անձանց համար նաեւ գրավոր հավաստում այն մասին, որ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ դիմողի (հայտատուի) կանոնադրությամբ տվյալ գույքը տվյալ ձեւով գնելու համար պետական համապատասխան մարմինների կամ ներին մարմինների (խորհուրդ, ընդհանուր ժողով) համաձայնությունը չի պահանջվում, կամ պահանջվող համաձայնությունները ստացված են՝ կցելով այդ համաձայնագրերը:*

3. Մրցույթի մասնակցության հայտերի ներկայացման կարգը

3.1. Մրցույթի մասնակցության հայտերը ներկայացվում են վարչություն՝ մինչեւ 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

3.2. Մրցույթի մասնակցության հայտերը, մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ՝ 2.1. կետում նշված փաստաթղթերով հանդերձ, ներկայացվում են սոսնձված եւ ստորագրված ծրարով՝ անձամբ կամ փոստով: Փոստով ուղարկված հայտերի (ծրարների) ներկայացման ժամկետ է համարվում ծրարի վարչություն մուտքի օրը եւ ժամը:

3.3. 3.1. կետին չհամապատասխանող հայտերն առանց ծրարը բացելու վերադարձվում են ներկայացնողին:

3.4. Մրցույթի հայտատուները՝ մինչեւ մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետի ավարտը (մինչեւ 5.3 կետում նշված ժամկետի լրանալը), կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է հայտերի ներկայացման կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտից հետո (5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո) ներկայացված հայտի փոփոխության կամ հետ վերադարձման դիմումները ենթակա չեն քննարկման:

3.4. Մրցույթի մասնակիցներից՝ մրցութային առաջարկները պետք է համապատասխանեն մրցույթի հաղթողին որոշելու համար առաջարկված պայմաններին (տե՛ս 3.12 կետը):

3.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով: Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

3.6. Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը եւ մրցույթի ծածկագիրը (ծածկագիր՝ 1118-Ա):

3.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաեւ ֆախսիմիլային կապով: Ստացված փաստաթղթերը վարչությունում դրվում են ծրարի մեջ եւ փակվում:

Ներկայացված ծրարները վարչության կողմից կնքվում եւ մուտքագրվում են:

3.8. 5.3. կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվում:

3.9 Մրցույթի հայտը գրանցվում է հատուկ գրանցամատյանում՝ հայտատուին տալով ստացական մրցույթի մասնակցության հայտը ընդունելու վերաբերյալ:

3.10. Մրցույթի հայտատուները 5.2. կետում նշված հատուկ հաշվին մուծում են մրցույթի մասնակցության նախավճար 5.1. կետում նշված գումարի չափով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի նախավճարն ընդգրկվում է մասնակցի կողմից առաջարկված գնի մեջ: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից մրցույթի արդյունքների արձանագրությունը չստորագրելու, հետագա վճարումները չկատարելու եւ (կամ) պայմանագիր չկնքելու դեպքերում նախավճարը չի վերադարձվում եւ օտարումը համարվում է չկայացած:

Մրցույթում հաղթող չճանաչված մասնակիցները, ինչպես նաեւ մասնակցի կարգավիճակ չստացած հայտատուները, մրցույթի մասնակցության նախավճարի վերադարձման նպատակով պետք է դիմեն վարչություն:

Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետում մրցույթում հաղթող չճանաչված հայտատուի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից համապատասխան դիմում չներկայացնելու դեպքում մրցույթի մասնակցության նախավճարը հաշվանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան հաշվին:

3.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

3.12 Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

3.12.1. գույքն իր միջոցների հաշվին, համաձայն սահմանված կարգով կազմած նախագծա-նախահաշվային փաստաթղթերի, այլ տրամաչափի խողովակներով փոխարինումը, որը կծառայի որպես կեղտաջրերի հեռացման համակարգ.

3.12.2. գույքն այլ տրամաչափի խողովակներով փոխարինելու աշխատանքների իրականացման ժամկետները.

3.12.3. այն առավելագույն գինը, որը 3.12.1. եւ 3.12.2. կետերով նշված աշխատանքների իրականացումից հետո մրցույթի հաղթողը պատրաստ է վճարել.

3.12.4. նոր խողովակաշարի կառուցումը եւ հետո միայն գույքի աղտոնաժումը եւ ֆանդումը:

3.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

4.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

4.2. Մրցույթի հաղթողը իր կողմից առաջարկած գինը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստորագրելու օրվանից եռամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության արժույթով՝ գումարն ուղղելով՝ «Պետական սեփականություն համավող հիմնական միջոցների (ֆոնդերի) օտարումից մուտքեր» գանձապետական հաշվին:

4.3. Համաձայն ՀՀ կառավարության 2011թ.-ի օգոստոսի 4-ի թիվ 1118-Ա որոշման 6-րդ կետի՝ մրցույթի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո մեկամսյա ժամկետում վարչությունը գնորդի հետ կկնքի օտարման պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին կատարել 3.12. կետի 3.12.1 եւ 3.12.4 ենթակետերում նշված (որոշման 4-րդ կետի 1-ին եւ 4-րդ ենթակետեր) աշխատանքները:

4.4. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, եւ մրցույթը համարվում է չկայացած:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	500 հազ. դրամ
5.2	Մրցույթի նախավճարի	Թիվ 1 տեղական գանձապետական մուտքագրման հատուկ հաշիվը բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	2011 թվականի սեպտեմբերի 27-ը, ժամը՝ 13:00-ն
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք. Երեւան, Տիգրան Մեծի 4, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, 438 սենյակ
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը	2011 թվականի հոկտեմբերի 3-ը, ժամը՝ 15:00-ն ք. Երեւան, Տիգրան Մեծի 4, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆախսիմիլային կապ	/37410/ 581441
5.7	Ինտերնետ	**URL: //www.privatization.am**

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ 581441, 091479834 հեռախոսահամարներով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Հ Ա Յ Տ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

_____

(հայտը ներկայացնողի անվանումը (անունը, ազգանունը),

_____

հասցեն, հեռախոսահամարը)

1. Ծանոթանալով 2011թ-ի _____ -ին կայանալիք մրցույթում օտարվող գույքի մասին հրապարակված տեղեկություններին՝ ցանկանում ենք (ցանկանում եմ) մասնակցել

_____

(գույքի անվանումը, գտնվելու վայրը)

_____ -ի մրցույթին:

2. Մրցույթում հաղթելու դեպքում պարտավորվում ենք (պարտավորվում եմ) մրցույթի արձանագրությունն ստանալուց հետո _____ օրվա ընթացքում /ոչ ավել քան եռամսյա ժամկետում/ վճարել առաջարկված գինը եւ 30 օրվա ընթացքում կնքել օտարման պայմանագիր:

3. Համաձայն ենք (համաձայն եմ), որ համապատասխան վճարումները չկատարելու եւ պայմանագիրը չկնքելու դեպքում մուծված նախավճարը չվերադարձվի:

4. Անձնագրային տվյալները _____

5. Ռեկվիզիտները _____

(հաշվի համարը, բանկի անվանումը)

6. Կից ներկայացվում են՝

◆ գրավոր առաջարկ մրցույթի պայմանների վերաբերյալ,

◆ նախավճարի մուծումը հաստատող փաստաթղթերի պատճենները,

◆ գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները (իրավաբանական անձանց համար),

◆ մրցույթի մասնակցի կողմից տրված լիազորագիր (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը),

◆ գործարար ծրագիր

◆ _____

◆ _____

Մրցույթի մասնակից (լիազորված անձ) _____ _____

(ստորագրությունը)

____ _____ 2011թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝24.8.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: